

ԲԱՐՁՐԱՑԻՐ — ԲԱՐՁՐԱՑՈՒՐ



# Ն.Ս.Ը.Ս.

ԲԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴԴԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ  
• ԲԻՄՆԵԱԼ 1918 ԻՆ •




## HOMENETMEN

### — Hai Scout —


REVUE MENSUELLE DE SCOUTISME  
ET DE CULTURE PHYSIQUE

Organe de l'U. G. Arménienne



ԹԻՒ 6      ՍԵՊՏԵՄԲԵՐ — 1946 — SEPTEMBRE      N°6

ԲԱՐՁՐԱՑԻՐ ԲԱՐՁՐԱՑՈՐ



6519-42

# Վ.Ս.Ը.Ս.


ԲԱՅ ՄԱՐՄԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԻ ՄԻՈՒԹԻՒՆ  
• ԲԻՄՆԵԱԼ 1918 ԻՆ •



## HOMENETMEN — Haï Scout —


REVUE MENSUELLE DE SCOUTISME  
ET DE CULTURE PHYSIQUE

Organe de l'U. G. Arménienne



U. G. ARMENIEN

ԹԻԻ 6    ՍԵՊՏԵՄԲԵՐ — 1946 — SEPTEMBRE    N° 6



4712-57

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր ԽՕՍՔԸ

Յանուն Հայրենիքի

Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

Հայրենիքը

ԺՊՏՈՒՆԻ

Հայերը Մոսկուայի շփերի մէջ

Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Տիգրան Պետրոսեան - հատրակի ակոյեան

Հրանտ Սարգսեան - կոփամարտիկ

Դասընթացի անմիջական խնամֆնեբու

Արեան շրջանառութիւնը

ՏՈՒԹ. Հ. ԳԱԼՃԵԱՆ

Հայաստանէն լուրեր

Հ.Մ.Ը.Մ.ի Յուշատետրէն

Հայաստանի մրցանիշերը

Մ. ՄԱԼՈՒՄԵԱՆ


ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇՔԵՐԹԸ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ

ՀՐԱՆՏ ՍԱՐԳՍԵԱՆ — կոփամարտի ակոյեան

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ — հատրակի ակոյեան

Հ. Մ. Ը. Մ. Ի ԳԻՆԵՉՕՆԸ



# Հ. Մ. Ը. Մ. Ի ՈՒՂԵՐՁԸ

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 26ԸԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

ԽՄԲ. — Հետեւեալ ուղերձը, Հ.Մ.Ը.Մ.Ի կեդր. վարչութեան սնուցումով, Հայաստանի Տարեդարձին առթիւ, ստորագրուած է նախագահ Գառլօ Շահինեանի կողմէ:

Ձգիտի համարձակէի ձայնս խառնել Հայ ժողովուրդին ծոցէն բարձրացող խանդավառութեան կանչերուն, եթէ Հ.Մ.Ը.Մ.Ի հաղարաւոր եղբայրներուս անխախտ հայրենասիրութիւնը ճնշող պարտականութեան տակ չզնչէր զիս՝ մեր ալ հիացումի եւ երախտազիտութեան տուրքը մատուցանելու՝ Հանրապետութեան տարեդարձին առթիւ:

Տարեդարձը մեզ կ'աւետէ թէ այլեւս դադրած ենք հնամենի մեծ ժողովուրդի մը մնացորդին վաշկատուն բեկորներն ըլլալէ, ու կրնանք արդար հպարտութեամբ պարծենալ՝ իբր արժանաւոր ազգի մը դաւակները, աղբ մը որ դիտցաւ, ընդդէմ բոլոր բռնատիրութեանց, իր արեան գնով պաշտպանել իր ազատութիւնները եւ դիւցազնական դոհարերութեամբ՝ ապահովել իր հայրենիքին դոյութիւնն ու անկախութիւնը:

Թէ հայութիւնը կը տիրանայ իր դարաւոր երազին՝ Ներգաղթով եւ հայրենական բռնագրաւուած հողերու վերադարձի պահանջով, որ կը հաւատանք թէ կ'իրականանայ անխափան, չնորհիւ Հայոց Պետութեան եւ իր մեծ բարեկամին՝ խորհրդային ժողովուրդներու հօր ու եղբայրական Միութեան:


Խոր հիացումով կը դիտենք յաղթական վերելքը՝ զոր մեր հայրենիքը՝ իր մշտաբերուն եւ անխոնջ ղեկավարներուն առաջնորդութեամբ, արձանադրեց մշակոյթի, դիտութեան, ճարտարագործութեան, մարմնակրթանքի եւ հանրային բարօրութեան յատուկ բոլոր մարզերուն վրայ:

Եղբայրական յուզումով եւ երախտազիտութեամբ կ'ողեկոչենք տքնաջան աշխատանքը զոր մեր հայրենակիցները յանձն առին ամբողջ 26 տարիներ՝ շինելու, շէնցնելու, կերտելու եւ ստեղծագործելու համար:

Սրտանց, ուժ եւ առողջութիւն կը մագթենք մեր Հայրենիքի եղբայրներուն եւ բոյրերուն, որոնց ամէն մէկը, դիտենք թէ աշխատեցաւ ու կ'աշխատի տակաւին՝ հեռաւոր զաղթականներուս տուն-տեղ, ապահով եւ հանգստաւէտ կեանքի մը պայմանները պատրաստելու համար. կորով եւ յաջողութիւն՝ մեր հայրենիքին բազմավաստակ ղեկավարներուն, որոնց կ'ողգուին մեր ակնարկները՝ նոր եւ մեծագոյն յաղթանակներու սպասումով. ու մեր կարգին՝ անդամ մըն ալ կը խոստանանք աւելի եռանդով, եւ առաւելազոյն նուիրումով՝ լծուիլ մեր նպատակին ու մշակել հայ երկսեռ պատանիներու եւ երիտասարդներու առողջութիւնը, թրծել անոնց ուժը պողպատեայ կամքի տոկունութեամբ, որպէսզի երբ ժամը հնչէ, փութան իրենց բաժինը տանելու հայրենիքի շինարարութեան ու զարգացման նուիրական ձեռնարկին:

ու, անխոնջ աշխատաւորներու, անձնուէր դիտնականներու, քաջարի զօրավարներու, հերոսական մարտիկներու եւ մշտաբերուն ղեկավարներու մեր հայրենիքին առջեւ, անդամ մը եւս կը կրկնենք մեր երդումը՝

— Մի՛շտ պատրաստ, ծառայելու Ազգին եւ Հայրենիքին:



# ՅԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ

Մրտարույս խօսքեր  
անոնց որ խղճի պարտք  
կը սեպեմ մեզ դէմ քալել

Այսօր տարեդարձ է: Հայրենիքի տարւան մը դործունէութեան հաշուեկշիռի օրը: Ստրկութեան եւ տառապանքի եօթը դարերու եւ բռնութեան դէմ երկարատեւ պայքարի ընթացքին, Հայրենիքի եւ ազգային ուրոյն կեանքի կարօտովը տանջւած ժողովուրդի մը համար նոյնքան նշանակաւոր, որքան Տաղաւար մը:

Այս օրն էր որ կ'ուզէինք, երկար ժամանակ բոլոր օտար ժողովուրդներու Ազգային Օրը տօնելէ ձանձրացած:

Այսօր, կառավարութիւն մը հաշուի կը նստի ինքն իր հետ, իր մէկ տարուան անցեալը քննելու եւ դալիք մէկ տարուան աշխատանքին ժամացոյցը լարելու համար:

Եւ այդ կառավարութիւնը մերն է, հայ ժողովուրդին կառավարութիւնը:

Այսօր, հայրենիք մը եւ ժողովուրդ մը՝ տարուան մը աշխատանքին բերքովը կը հպարտանան եւ նոր տարուան համար՝ յաջողութեան մաղթանքներով կ'ողջագուրուին:

Եւ այդ Հայրենիքը մերն է, Հայոց երկիրը եւ այդ ժողովուրդը մենք ենք:

Տխուր իրականութիւնը որ մենք՝ օրերով հեռու կ'ապրինք մեր երկրէն, մեզ իրաւունք չի կրնար տալ անտարբեր մնալու այս օրուան հանդէպ:

Եթէ երկրին հրաշալի վերելքին մէջ, չունեցանք մեր ուղղակի մասնակցութիւնը, եթէ անոր հրաշալի արտադրութիւններուն մէջ՝ մեր ձեռքերուն կամ մտքերուն բաժինը չդրինք, եթէ մեր ձեռքերով քար մը չաւելցուցինք բարձրացող շէնքերուն վրայ, բայց չդադրեցանք երբեք մտածելէ մեր Հայրենիքին վրայ, մեր կարդին աշխատեցանք յօդուտ անոր՝ ինչ միջոցներով որ կարելի էր:

Գործեցինք, միշտ Հայրենիքի օգուտը նկատի ունենալով:

Զէ՞ որ այդ խոսք է մեր Միութեան երգումը, — «Մտառայել Ազգին եւ Հայրենիքին»:

Տարեդարձը ուրեմն, մեզ համար ալ հաշուեկշիռի օր է. եւ որպէսզի, բացուող տարուան ընթացքին, խուսափինք սխալներէ, քննենք անցնող մէկ տարին եւ նախ, հաշուի կանչենք մեր խղճերը:

Ի՞նչ ըրինք:

Կազմեցինք Հ.Մ.Բ.Մ.ի Կեդր. Մարմին մը առժամեայ հանգամանքով, որպէսզի, ա. — Վերակազմենք նախ՝ ներքին ցուերով տկարացած եւ յետոյ՝ պատերազմի հետեւանքով քայքայուած Ֆրանսայի Հ.Մ.Բ.Մ.ը:

բ. — Մարզական անջատ եւ հակամարտ խումբերուն միջեւ ստեղծենք ճշմարիտ միութիւնը Հ.Մ.Բ.Մ.ով:

գ. — Յարարելութեան մտնենք Շրջաններու հետ եւ պատրաստենք Հ.Մ.Բ.Մ.ի ընդհ. պատգամաւորական ժողովը:

Եղբայր,

(Եղբայր կը կոչեմ քեզ, ո՞վ որ ալ ըլլաս, ուր որ ալ դանուխ, ի՞նչ կուսակցութեան ալ պատկանիս, եւ ի՞նչ ալ ըլլայ քու դիրքդ մեզ հանդէպ, եղբայր ես՝ քանի որ Հ.Մ.Բ.Մ.ի անունով կը խօսիս),

Հարց կուտաս թերթի մը անկիւնէն, մերթ արհամարհանքով, մերթ հեղինակութեամբ, երբեմն ալ վախկոտ սպառնալիքներով, — ո՞վ էք դուք, ո՞ւր կէ կուգաք, ո՞վ ձեզի իրաւունք տուաւ Հ.Մ.Բ.Մ.ի դըլխուն Կեդր. Վարչութիւն խաղալու»:

Պարզ պատասխան մը՝ որ եթէ քեզ չհամոզէ, կը նշանակէ թէ համոզուելու միտք չունիս:

Տարիներ առաջ, երբ ձիգմէճեաններ, Մերձանօֆներ, Յակոբեաններ, ստորագրողս եւ ուրիշներ՝ հիմը դրին այս Միութեան, ոչ ոք հարցուց այն ատեն դեռ շատ երիտասարդ՝ այս մարդոց:

— Ո՞վ էք դուք, ո՞ւրի՞նչ կուզաք, ձեզ ո՞վ իրաւունք տուաւ այս տեսակ Միութիւն մը հիմնելու:

Ու տարիներու ընթացքին, տեսնուեցաւ թէ, առանց որեւէ իմաստունի կարծիքն առնելու, իրենք իրենց համեստ խելքով, հրաշալի դադափար մըն են յղացեր եւ կեանքի կոչեր, ստեղծելով Հ.Մ.Բ.Մ.ը:

Տեսնուեցաւ թէ շատ լաւ բան մըն են Երբ, քանի որ Պոլսէն մեկնելով՝ Ժողովուրդին հետ դաղթականի ցուպը բռնած, ան այսօր ամբօրէն հաստատուեր է ամէն տեղ ուր որ Հայը կանգ է առեր, Ֆրանսա, Սուրիա, Յունաստան, Պալքանները, Եգիպտոս, Պաղեստին, Արժանթին, Ամերիկա...

Ուրե՞մն,

Ի՞նչ իրաւունքով որ տարիներ առաջ, հիմը դրինք այս Միութեան, միացնելով եւ ի մի ձուլելով, անջատ ու հակամարտ՝ փոքր Միութիւններ, նոյն իրաւունքով կազմեցինք Առժամեայ Կեդր. Վարչութիւնը՝ ՏԵՂԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՍ ՄԵԾ ՄԻՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԻՈՐ ՏԻՐՈՋ...

Գէ՞շ ըրինք:

Քեզ կը հարցնեմ, եղբա՛յր, որ քէնոս դէմքով կը դիտես զիս, գէ՞շ ըրինք:

Եթէ գէշ ըրինք, վաղը կուզայ Պատգամ. Ժողովը եւ մեզ կը դատապարտէ եւ մեր տեղը կուտայ արժանաւորին:

Մինչ այդ սակայն, պահ մը մոռցիր, հեռուէն ու մօտէն զլխուդ տեղացող զԵՐ-դուութեան նամակները, ականջդ ճանկող փսփսուքները եւ բոլոր մութին մէջ յայտնուող իմաստութեան մտայլ թելադրութիւնները:

Ձեռքդ դիր խղճիդ ու մտածէ՛, բայց քու խելքովդ, առանց ուրիշի կանթեղէն լոյս մուրալու...

Հ.Մ.Բ.Մ.ի Շրջանները պէտք ունէ՞ին զիրենք շաղկապող կեդրոնի մը,

Եթէ այո՛, ո՞վ պիտի ընէր: Տարիներէ ի վեր Կեդրոն մը գոյութիւն չունի, որո՞ւ տրուած էր այդ իրաւունքը:

Ֆրանսայի կազմալոյժ շրջանը պէտք ունէ՞ր լուրջ վերակազմութեան ձեռնարկի մը:

Եթէ այո՛, ո՞վ պիտի ընէր, որո՞ւ տրուած էր այդ իրաւունքը:

Պէ՞տք էր Մասնաճիւղեր կազմել, ամէն ուր որ հայ դաղութ մը հաստատուած է: Պէ՞տք էր քայքայուած հին խումբերը տաքի կանգնեցնել եւ նորեր մէջտեղ հանել: Պէ՞տք էր մեկուսացած հիները՝ այս Միութեան հոգիին արժատները՝ փնտուել, ուղեւորել, քովէ քով բերել ու դործի լծել, իրր առաջնորդ նորերուն, որ ոչինչ գիտեն Հ.Մ.Բ.Մ.ի փառաւոր անցեալէն, ոչինչ կը հասկնան անոր համադրային հոյակապ նշանարաններէն, եւ անտարբեր են՝ անոր նուիրական նպատակին հանդէպ:

Գոհ չե՞ս, որ բարիդեան շրջանի մէկ-երկու Մասնաճիւղերուն տեղ, այսօր՝ տասնեակ մը կորրիճ եւ ստուար խումբեր կը դործեն:

Գոհ չե՞ս որ վաղը, Ֆրանսայի Շրջանի Պատգամ. Ժողովին, Հ.Մ.Բ.Մ.ը կը ներկայանայ 30է աւելի Մասնաճիւղերով:

Պէ՞տք էր այս բոլորին դործունէութիւնը առաջնորդել, համադրել, ներդաշնակել եւ հակադէպի ենթարկել:

Գոհ չե՞ս որ պաշարպօզուբուքեան վերջ կը տրուի:

Մեր Միութիւնը կը ծառայէ Ազգին եւ Հայրենիքին:

Այս է անոր անխախտ նշանարանը, եւ ոչ թէ ասոր-անոր, ով ալ ըլլայ անիկա: Եւ Ազգին ու Հայրենիքին շահը կը պահանջէ կարգապահութիւն, բառին ամենէն ազնիւ իմաստովը, բոլոր Միութիւններուն մէջ առանց բացառութեան, որոնք կը յաւակնին դործել «Ազգին ու Հայրենիքին» անունով:

Եւ մեր Միութիւնը ունի այդ յաւակնութիւնը:

Ու նաեւ:

Կ'երեւի, եղբա՛յր, շատ ալ հաճոյք չէ պատճառած քեզի, որ ելեր ենք այս ու այն Միութիւնները մեր մէջ առնելու: Կ'ըսես.— Ո՞վ տուաւ ձեզի այդ իրաւունքը: Միւս կողմէ սակայն, զխտեմ թէ, ինքզինքիդ իրաւունք տուեր եւ մերժելու բազմաթիւ երիտասարդներ՝ որոնք դիմեր են Մասնաճիւղիդ արձանագրուելու:

Հիմայ, ես հարց տամ քեզի .

Գուն իսկ, ուրկէ՞ առիւր այդ իրաւունքը :

Հ.Մ.Լ.Մ., գիտե՞ս այս շորս գլխադիր տառերուն նշանակութիւնը (Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն) Միութիւնն է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ : Ո՛չ ոք իրաւունք ունի անոր մուտքը մերժելու որ եւ է պարկեշտ Հայու առջեւ : Գոհ պիտի մնա՞ս, եթէ վաղը, առանց պատճառի, քեզ վտարեն Մասնաճիւղէդ :

Ո՛չ անշուշտ : Նոյն բանն է որ կ'ընես հանդէպ մարդոց, որոնք դժբախտութիւնն ունին՝ քու անձնական հաշիւներուդ չճառայելու :

Այս փոքրիկ շեղումէն յետոյ, դառնանք սակայն մեր բուն հարցին :

Եթէ իրր ճշմարիտ Հ.Մ.Լ.Մ.ական, ծանօթ ըլլայիր Հ.Մ.Լ.Մ.ի պատմութեան, նախ ինքզ իսկ՝ պիտի ըմբոստանայիր Հ.Մ.Լ.Մ.էն դուրս ուրիշ որեւէ մարզական խումբի գոյութեան ու զործունէութեան դէմ : Այդ իրողութիւնը պիտի նկատէիր իրր ուժի աւելորդ վատնում, հայ ժողովուրդին կենսական շահերուն դէմ ձեռնարկ եւ ամենէն առաջ, ինքզ իսկ, պիտի ջանայիր քու շրջանակիդ մէջ վերցնել պառակտումի այդ փաստը :

Զէ՞ որ Հ.Մ.Լ.Մ.ը ծայր տուաւ այդ նպատակով եւ իր անունն առաւ ընդհանուր միութեան նշանաբանին տակ :

Եւ յետոյ՝ տարիներէ ի վեր, չեմ մոռցած թէ, դուն էիր որ ամէն տեղ եւ ամէն գործի մէջ՝ միութիւնն կը պոռայիր, ցոյց կուտայիր ցրուած ուժերով գործելու վրեսաները, կը փաստէիր պառակտումի վրտանդները՝ այն կացութեան մէջ ուր կը գտնուինք :

Այսօր՝ կա՞յ մեր կացութեան մէջ փոխւած բան մը, որ քեզի իրաւունք տայ պառակտումի քարոզիչը դառնալու, դժբերով քու իսկ նշանաբաններդ, մերժելու քեզ դիմողները, եւ խրտչելու միութեանէն :

Գոհ չե՞ս որ Հ.Մ.Լ.Մ.ը կ'աճի ու կը բազմանայ թարմ եւ արժէքաւոր տարրերու յօժարակամ միացումովը :

Գոհ չե՞ս որ հարիւրաւոր երիտասարդ-

ներ ու նորահաս պատանիներ՝ իրենց թարմ ու կրակոտ արիւնին ու աւիւնին ուժը կը մատուցանեն Հ.Մ.Լ.Մ.ի երեսնամեայ մարմնին :

Ա՛հ, շատ պիտի ուշէի որ այս հարցումներուն պատասխանէիր, բայց դուն ինքզ պատասխանէիր, ճիշտ ինչպէս որ կը զդաս, ճիշտ ինչպէս որ կը մտածես, եւ ոչ թէ դբէիդ տակ դնելով խօսքը՝ անոնց որ կը խտնչուկեն, բայց վաղը երբ մենք ալ սկսինք մեր կարգին խտնչուկել, իրենք պիտի ելլեն ջուրին երեսը՝ քեզ ձգելով տակը... — անոնց որ սկսեր են քու բարեմիտ աչքերուդ ցոյց տալ ՍԵՒ ԶԵՌՔԵՐՈՒ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ... :

Մենք չենք հարցնել իսկ թէ ՍԵՒ ԶԵՌՔԵՐՈՒ յո՞ր կողմը կը գտնուի . հո՞ս թէ հոգ :

Գիտենք ՍԵՒ ՀՈԳԻՆ, կը ճանչնանք զայն իր բոլոր ձեւերուն մէջ, իր բոլոր գոյներով, իր բոլոր շարժումներով . զազանիք չունի այլեւս մեզի համար եւ երբէ՛ք, բայց երբէ՛ք մեզ չի սարսափեցնէր :

Միայն, կը խղճանք որ կը յաջողի տակաւին միամիտներ համոզել, իր հարազատ եղբայրները դրժել տալու աստիճան... :

Կրնաս չճանչնալ զիս, մեղ բոլորս : Հոգ չէ եղբայր, որքան ալ ուրացումը ցաւ պատճառէ մեզի, գործը ողբերգութեան չենք տանիր :

Անտուակ որդին կրնայ վաղը տուն վերադառնալ, անկեղծ զղջումով, գիտակից՝ սխալին գոր գործեր է անդիտութեամբ, Մեծ բնտանիքին ծառայելու հաստատ կամքով :

Որովհետեւ, ինչ որ ալ ընես, ինչ որ ալ ընեն ուրիշներ քու ետեւէդ, քեզ ուժ տալու համար, չեն կրնար քանդել Գերդաստանը՝ որուն մեծ անդամները՝ զիրար կը ճանչնան, ծնած ըլլալով նոյն ծնողքէն՝ նոյն յարկին տակ, զիրար կը յարգեն՝ երանելի այն օրերուն իրենց ծնողքէն սորված ըլլալով՝ յարգանքը գոր իրարու կը պարտին եւ սերտօրէն իրարու ձեռք կու տան, իրարու կ'օգնեն, Գերդաստանին օգտին ու շահուն համար :

Այդպէս տեսան իրենց ծնողքէն՝ Հ.Մ.

# Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ը

Վեց դարերէ ի վեր է որ Հայը կորսըն-  
ցուցեր էր իր Հայրենիքը: Մեր պապերը  
պարապ տեղը երազեցին: Մեր հայրերը ի  
ղուր յուսացին, ու մենք է որ անսահման  
երջանկութիւնը ունեցանք իրականացած  
տեսնելու այդ դարաւոր յոյսերը:

Ի՞նչ կը ներկայացնէր Հայրենիքը մեզ  
համար, ի՞նչ կը թելադրէր Հայրենիքը բա-  
ուր մեր մանուկ հասակին, ասկէ մօտաւո-  
րապէս 30-40 տարիներ առաջ: Տարտամե  
անորոշ բառ մըն էր անիկա, հատուկոր  
առասպելներէ քաղուած, ականջէ ականջ  
մըմնջուած բառերէ հետեւցուած, վախ-  
կոտ բացատրութենէ հասկցուած: Դպրո-  
ցական դրասնեակներու վրայ հաշիւ կը  
համարձակէինք աչքերնիս դարձնել Փոքր  
Ասիոյ քարակղզին վրայ եւ հոն փնտռել  
Հայաստանի սահմանները, ու հալածուած  
եղջերուի նայուածքներով կը փոփոսայինք  
Արարատի, Սեւանի, Երեւանի, Արաքսի  
նուիրական անունները: Երազկոտ աչքե-  
րով մտիկ կ'ընէինք մեր մամիկներուն  
քրթմնջած յանկերդները, «Ծիծեռնակ,

ծիծեռնակ», «Մայր Արաքսի ափերով» եւ  
այլն: Մեր մանկական հողիները կ'ընդվը-  
ղէին, պատի մը մութ մէկ անկիւնը կախ-  
ւած Անիի աւերակներուն վրայ լացող տխ-  
րաղէմ, սղակիր Մայր Հայաստանի պատ-  
կերին ի տես: Եւ խանդավառութեամբ կը  
լեցուէր մեր սրտերը երբ պատի օրացոյցի  
մը յենարան ծառայող խաւաքարտի մը  
վրայ կը նկատէինք Քաջն Վարդանի ռազ-  
մաշունչ կեցուածքը: Ահա ամբողջութիւ-  
նը այն պատկերներուն որոնք մեր մատաղ  
հողիներուն համար կը խորհրդանշէին  
Հայրենիքի դադափարը: Ու յանկարծ ծը-  
նունդ առաւ Հ.Մ.Բ.Մ.ը: Ան մեզ տուաւ  
իրբ Հայրենիքի խորհրդանշան, մեր ճա-  
կատներուն վրայ զետեղելու համար, դոյզ  
Մասիսները, չըջապատուած «Բարձրա-  
ցի'ր, բարձրացո'ւր» վսեմ նշանարանով:  
Ան պարտադրեց մեզ ուխտել եւ ըսել.  
«Պատուոյս վրայ կ'երդնում ծառայել Հայ-  
րենիքիս»: այսպիսով սկսաւ մարմին առ-  
նել Հայրենիքի իրական զգացումը մեր  
սրտերուն մէջ: Ու երբ տարիներ վերջ,

Ը.Մ.էն — ընտանեկան յարկին տակ ուր  
ծնան եւ մեծցան, Սուրբայէն, Պաղեստի-  
նէն, Յունաստանէն, Եգիպտոսէն մինչեւ  
Արժանթին, եւ այլն:



Այսօր Տարեդարձ է: Հաշուեկշռի Օր:  
Պահ մը, եղբայր, Հաշուի նստէ քու  
խղճիդ հետ, բայց մինակ, հեռու՝ սուտ-  
խուլերէն եւ կամաւոր կոյրերէն, հեռու  
փառամով դաւադիրներէն եւ քսու խառ-  
նակիչներէն, մոռցի'ր նամակները որ կը  
տեղան զլիսուդ, ուրացումի խօսքերը որ  
կը փոփոսան ականջիդ:

Որպէսդի, լսես միայն խղճիդ Չայնը:  
Այդ Չայնը, ապահովարար, քեզ պիտի  
յիշեցնէ Հ.Մ.Բ.Մ.ականի երդումը՝ Ծա-  
ռայել Ազգիդ եւ Հայրենիքիդ, ամէն տեղ,  
ամէն ժամ, ամէն միջոցով:

(Բայց, խօսքը մեր մէջ, ըրա՞ծ ես այդ  
երդումը):

— Ծառայելու համար՝ ՄԻԱՆԱԼ:  
— Միանալու համար՝ անմտութեամբ  
եւ քինախնդրութեամբ՝ հացին կարազ  
չքսել բոլոր անոնց որոնց տարիներու աք-  
հետն եղած է պառակտել՝ միութիւն քա-  
րողելով, քանդել՝ շինարարութիւն հոլո-  
վելով ու հողիներ խաթարել՝ պարկեշտու-  
թեան պատգամներ արձակելով:

Սեւ Զե՞ոք...  
Կը ճանչնանք ՍԵՒ ՀՈԳԻՆ, երկար ատե-  
նէ ի վեր, դադունիք չունի մեզ համար  
այլեւս. եւ ատով իսկ կը խնդանք վրան ու  
կը քալենք անսայթաք, անվարան ու հը-  
պարտ՝ մեր ճամբէն, մեր հին ճամբէն  
դէպի Ազգ եւ Հայրենիք...

ԳԱՌԼՕ ԾԱՀԻՆԵԱՆ



Անիի աւերակներու մէջէն դուրս եկաւ ժպտադէմ, յաղթանդամ, Սորհրդային Միութիւններու հայրը Անմահ Սթալինը՝ որբուկ Հայաստանի ձեռքէն բռնած, առաջնորդելով զայն աւերակներէն հեռու, լայն պողոտային վրայ, ցոյց տալով անոր վերելքի, յառաջդիմութեան, բարձրացումի լուսաշող ճամբան: Հ.Մ.Ը.Մ. ահաններու սիրտը արդէն պատրաստ էր դուրդուրանքով տեղ տալու այդ նորածին Հայրենիքին:

Այսպէս Հ.Մ.Ը.Մ. ներկայ եղաւ 1914—18ի պատերազմի երկունքէն կեանք առած Սովետական Հայաստանի ծնունդին: Ան գործովտ արտայայտութիւններով հետեւեցաւ Մանուկ Հայաստանի առաջին քայլերուն, ան հպարտութեան զգացումներով նկատեց անոր հսկայաքայլ յառաջդիմութիւնը տնտեսական, մշակութային և մարզական զեւոնի վրայ: Ան երախտազէտ սրտով նկատեց իր եղբայրներուն դափնեզարդ յաղթանակները վերջին պատերազմի ընթացքին: Ու այս իրականութիւնները այնքան ամրապնդեցին Հայրենիքի սէրը ճշմարիտ Հ.Մ.Ը.Մ. ահաններու սրտին մէջ (եւ անոնց թիւրկարծուածէն շատ աւելի պատկասելի է) որ ոչ մէկ անհատ, ոչ մէկ իմբակցութիւն, ոչ մէկ կուսակցութիւն կարող է հակառակ իր շրջուցիչ խոստումներուն թէ սաղայէլական սպառնալիքներուն, ջնջել զայն:

Եւ 30 տարիներու իր գործունէութեան ընթացքին Հ.Մ.Ը.Մ. կատարեց, առաջին օրէն իսկ, Հայրենիքի ծառայելու համար որած երզումը:

Իրօք ալ թէպէտեւ Հ.Մ.Ը.Մ. ահաններ զէն ի ձեռին, պատերազմի դաշտերուն վրայ շկուռեցան, սակայն անոնք պայքարեցան անդադար ուրիշ ահաբեկ վտանգի մը դէմ, օտար երկինքներու տակ, հայ երիտասարդութեան ուժացումի, այլասերումի, փճացումի եօթնադուլս վիշապին դէմ: Եւ ասիկա ի սէր Հայրենիքի, ի շահ մեր սիրելի Սովետական Հայաստանին:

Մեր Հայրենիքի արժանաւոր և արդարադատ կառավարիչները կը գնահատեն Հ.Մ.Ը.Մ.ի ազգօգուտ գործունէութիւնը: Անոնք լաւ կը ճանան ճշմարիտ Հ.Մ.Ը.Մ. ահաններու զգացումները, անոնք լաւ գիտեն թէ Հայրենիքի աջակից Միութիւնը վարկարեկելու մտօք մէկ երկու կեղծ Հ.Մ.Ը.Մ. ահաններու էլոյթները, աննշան դէպքեր են և անկարող փոխելու Հ.Մ.Ը.Մ.ի 30 տարուան ընդգրկած հայրենասէր ուղղութիւնը: Անոնք գիտեն թէ տասնեակ հազարներով Հ.Մ.Ը.Մ. ահաններու երիտասարդ սրտերը կը տրոփեն Հայրենիքին համար, և թէ անոնք ի լուր Հայրենիքի դրկարաց կոչին, երկրորդ ուխտ մը եւս ըրած են, այն է առաջին առիթով, թոչիլ դէպի Հայաստան, հոն ծնրադիր, աչքերնին դարձուցած, տարիներէ ի վեր իրենց զլխարկներուն վրայ կրած, իրենց դօտիներուն վրայ պտտուցած, իրենց սրտերուն մէջ փայտալից զոյլ Մասիսներուն, և անգամ մը եւս կրկին՝ «Պատուոյս վրայ կ'երդնում ծառայել Հայրենիքիս...»:

ԺՊՏՈՒՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՏՈՂԱՆՑՔԸ  
ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՇՔԱՀԱՆԳԷՍԻՆ  
Դրօշակիրը՝ հայ Ախոյեան Ս. Համբարձումեան



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐՆԵՒԿՆԵՐԸ

## ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՇՔԱՀԱՆ ԴԵՍԻՆ

(ԵՐԵՒԱՆԷՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՄԱՐ)

Իւրաքանչիւր տարի Մոսկուայում կազմակերպուող աւանդական Ֆիզիկուլտուրային շքանշանէսը հանդիսանում է ոչ միայն երիտասարդութեան, զեղեցկութեան եւ առողջութեան հոյակապ մի տօն, այլեւ Սովետական Միութեան ժողովուրդների նուաճումների տարեկան ստուգատեսն է Ֆիզիկուլտուրայի եւ սպորտի բնագաւառում: Այստեղից էլ պարզ է, թէ պատասխանատուութեան ինչ զգացմունքով էին պատրաստուում Հայաստանի մարմնամարզիկներն այդ օրուան:

Հայաստանի բաղմահազար մարմնամարզիկներից միայն 320 լաւագոյն սպորտըմէններ արժանացան Համամիութենական Մարմնամարզիկների շքանշանէսին մասնակցելու պատիւին:

Ո՞ւմ ներկայացուցիչներն էին այդ 320՝ առողջութեամբ եւ անսպառ ուժով լի մարզիկ, ի՞նչ նուաճումներով էին եկել նրանք զէպի երկրի սիրտը՝ Մոսկուա, ի՞նչ հաշուետուութեամբ անցան նրանք ժողովուրդների մեծ առաջնորդ, Գեներալիտսիմուս Ստալինի մօտից, տրիրունաները լցուած Մոսկուայի տասնեակ հազար լաւագոյն մարզկանց մօտից:

Այդ 320 Ֆիզիկուլտուրիկները, Հայաստանի մարզասէր երիտասարդութեան փայլն էին: Նրանք ներկայացուցիչներն էին Հայաստանի 35 հազարնոց սպորտսմէնների բանակի, որոնք ընդգրկուած են

Հանրապետութեան 802 Ֆիզիկուլտ կուլեկտիւնների մէջ, որոնցից 650ը գիւղական վայրերում՝ 23.000 անդամներով եւ 127ը գործարաններում, Փարբիկաններում ու արդիւնաբերական այլ ձեռնարկներում:

Դրանց թւում են Կիրովականի շրջանի Ղշլաղ գիւղի կոլխոզի, Ալալբերդու շրջանի Ուղունլար գիւղի, Սեւանի շրջանի Յրդ Ինտերնացիոնալի անուան, Էջմիածնի, Կոտայքի եւ այլ շրջանների կոլխոզների

Ֆիզիկուլտուրային կուլեկտիւնների ներկայացուցիչները, որոնք աչքի են ընկնում իրենց յաջողութիւններով եւ նուաճումներով, սպորտի այլ եւ այլ բնագաւառներում:

Եկել էին եւ միջնակարգ դպրոցների, բարձրագոյն ուսումնական հիմնարկների եւ սպորտային ընկերութիւնների Ֆիզիկուլտուրային կուլեկտիւնների ներկայացուցիչները:

Նրանք վարպետօրէն ցուցադրեցին սպորտի լայն զարգացումը մեր երիտասարդ սեպուրբիկայում, ապացուցեցին, որ մարմնամարզութիւնը, լողը, բոնցքամարտը, ըմբշամարտը, դահուկավազքը, թեթեւ ու ծանր աթլետիկան եւ առանձնապէս Փութպոլը մեծ մասսայականութիւն են ստացել մեր ժողովրդի մէջ: Բաւական է ասել, որ միայն Փութպոլային խմբերում ընդգրկուած է 2400 մարդ, որ մեր կոլխոզային գիւղերում միայն 1946 թուականի ընթացքում կազմակերպուել է 100ից աւելի Փութպոլային խումբ:

Մոսկուայի «Իինամօ»ի ստալինի տրիրունների մօտով անցան եւ Հայաստանի 30 սպորտային դպրոցների պատուիրակ ուսանողները: Այդ դպրոցներում ուսանում են 9500 պատանիներ եւ երիտասարդներ:

Համամիութենական պատանեկական մրցութիւններին Հայաստանի պատանիների հաւաքական խումբը զբաւեց 2րդ տեղը: Մարզիկներ Լ. Գրիգորեանը եւ Ս. Քոչարեանը արժանացան Սովետական Միութեան ախոյեանի կոչման: Վերջին տարիներին Հայաստանը տուեց այնպիսի մարզիկներ, ինչպիսիք են Հրանտ Շահինեանը եւ Է. Դաւթեանը, որոնք հասան Սովետական Միութեան լաւագոյն վարպետների մակարդակին: Շահինեանը այժմ

դառնում է ՍՍՌՄ լուսագոյն մարզիկների առաջին տասնեակի մէջ:

1945—46 թուականների հանրապետական դահուկային մրցութիւններին մասնակցում էին Հայաստանի 22 շրջանների կոլխոզնիկները եւ մի շարք սպորտային ընկերութիւնների ներկայացուցիչները:

Ընթացիկ տարուայ միջմիութենական մրցութիւններին մասնակցում էին 14 հազար դահուկաւորներ: Ղշլազ դիւլի կոլխոզնիկ Լ. Պետրոսեանը 30 կիլոմետր վազքում ձեռք բերեց Սովետական Միութեան լուսագոյն դահուկաւորների առաջին տասնեակի մէջ լինելու պատիւը:

1946 թուականին Համամիութենական դահուկային վազքում մեր հանրապետութեան կոլխոզային խումբը 30 կիլոմետր վազքում ցոյց տւեց Միութենական առաջին կարգի արդիւնք, իսկ 10 կիլոմետր վազքում Ս. Պետրոսեանը զբաւեց առաջին տեղը:

Սովետական Հայաստանը իրաւունք ունի պարծենալու իր առաջնակարգ սպորտումէններով, ինչպիսիք են Ռ. Մանուկեանը, Հ. Աղղարովը, Վ. Պարունակեանը (ծանրութիւն բարձրացնողներ), Ս. Եալթարեանը, Ս. Նազարեանը, Ս. Վարդանեանը, Ս. Շահինեանը, Ս. Մաճկալեանը, (ըմբիչներ), Ս. Պապեանը, Ն. Հախումեանը (բոնցքամարտիկներ) եւ շատ ուրիշները:

19ամեայ բոնցքամարտիկ Հրանտ Սարգսեանը նուաճեց Սովետական Միութեան ախոյեանի կոչում «Սպարտակ» ընկերութեան քով:

17ամեայ Տիգրան Պետրոսեանը Համամիութենական պատանեկական շախմատային (ճատրակ) մրցութիւններին շահեց առաջին տեղը եւ արժանացաւ Սովետական Միութեան ախոյեանի կոչման:

Պարտիան եւ Սովետական Հայաստանի կառավարութիւնը ստեղծել են բոլոր պայմանները Ֆիզիկական կուլտուրան ուսուցողութեան համար: Բաւական է ասել, որ միայն 1946 թուին Հայկական ՍՍՌի Մինիստրների Սովետին կից Ֆիզիկուլտուրայի եւ

եւ Սպորտի Գործերի Կոմիտէի սիստեմում վարկ է բաց թողած 7 միլիոն 550 հազար ուրլի, 1940 թուի 2 միլիոն 380 հազար ուրլու փոխարէն:

Ռեսպուբլիկան ունի 3 ստադիոն, 30 Ֆուտբոլային դաշտ, 500 կոլխոզային սպորտ հրապարակ, 420 դահուկային բազա, 82 սպորտ-դահլիճ:

Մեր հանրապետութեան այս նուաճումներն էին ցուցադրում այն 320 լուսագոյն սպորտումէնները, որոնք մասնակցում էին Համամիութենական Ֆիզիկուլտուրային շրահանդէսին եւ որոնց ծափահարեց ինքը՝ Մեծ ՍՍՍՐԻՆԸ:

Ի դէպ, մի քանի խօսք էլ շրահանդէսի մասին:

Ես մասնակցել եմ Մոսկուայում տեղի ունեցած Համամիութենական բոլոր շրահանդէսներին: Բայց պէտք է ասեմ, որ դեռ երբէք Մոսկուայի «Դինամօ» ստադիոնը — մեր երկրի սպորտային երիտասարդութեան պարծանքը — այնքան շքեղ ու հանդիսաւոր չի եղել, ինչպէս այս օտնական Յոբը:

Նախքան շրահանդէսի սկսուելը, ստադիոնի տրիբունաները լցուած էին բազմաթիւ հիւրերով: Եկել էին Մոսկուա քաղաքի անուանի մարզիկ՝ գործարանների եւ արդիւնարեւակի ձեռնարկութիւնների ստախանովականները, գիտնականները, արուեստի եւ զբաղմունքի աշխատողներ, կարմիր բանակի սպաներ եւ զենեւրաւներ: Սովետական Միութեան երիտասարդութեան հիւրերի թուում էին՝ Հարաւլալայի, Չխոստովակիայի, Բուրգարիայի, Ահաստանի, Ֆրանսայի, Իտալիայի, Ալբանիայի, Նորվեգիայի, Իրանի, Ֆինլանդիայի եւ Շվեդիայի սպորտումէններ պատուիրակները: Օթեակներում նստած էին Չխոստովակիայի պետական պատուիրակութեան անդամներ՝ Կլեմենտ Գոտովալը, Ա. Մասարիկը եւ Վ. Կլեմենտիսը, զիպլոմատական մարմնի անդամները, իրանական իշխանուհի Աշրաֆ Փէլէյիին իր շքախումբով, Միաւորուած Ազ-

զերի գլխաւոր քարտուղար Տրուզվէ Լին, Սովետական եւ օտարերկրեայ մամուլի ներկայացուցիչները:

Ահա տասնեակ հազար Մոսկուացիներին եւ հիւրերի հայեացքը դառնում է դէպի կենտրոնական օթեակը, որտեղ երեւում են Գեներալիստիմուս Ստալինը, Ընկ. Ընկ. Մոլոտովը, Անդրէեւը, Բերիան, Վորոշիլովը, Ժգանովը, Կազանովիչը, Սալենկովը, Միկոյեանը, Շվերնիկը, Վոզնեսենսկին, Բուլգանինը, Կոսիգինը:

Ամբողջ ստադիոնով մէկ որոտում է խանդավառ օվիացիան, ի պատիւ սովետական ժողովրդի մեծ առաջնորդ եւ ուսուցիչ Ստալինի:

Շեփորների ձայնը ազդարարում է հանդիսաւոր երթի սկիզբը:

Տրիբունաները ջերմօրէն ողջունում են Ռուսաստանի Ֆէդէրատիւ Ռեսպուբլիկայի, Ուկրայինայի, Բելոռուսիայի, Վրաստանի եւ միւս հանրապետութիւնների Ֆիզիկուլտուրնիկների զեղեցիկ շարասիւնները:

Հանդիսաւոր երթով անցնում են եւ Հայաստանի Ֆիզիկուլտուրնիկները: Նրանք Մոսկուա են բերել արեւափառ Հայաստանի դիւթիչ հրապոյրները: Մեր Ֆիզիկուլտուրնիկների վայելչագեղ քայլուածքը եւ կատարած զեղեցիկ վարժութիւնները, առաջ

են բերում Մոսկուացիներին ջերմ եւ չընդհատուող ծափահարութիւնները:

Ես, ինչպէս եւ իմ բոլոր ընկերները հրպարա էինք այն դիտակցութեամբ, որ Հայաստանի սպորտամէնները — Ֆիզիկուլտուրայի չքահանգէսի մասնակիցները, արժանացան բազմահազար Մոսկուացիների եւ հիւրերի բուռն ծափահարութիւններին:

Ես առանձնապէս ուրախ էի այն բանի համար, որ մէկ անգամ եւս տեսայ մեր թանկագին հայր եւ ուսուցիչ, Ֆիզիկուլտուրնիկների լուսագոյն բարեկամ մեծ Առաջնորդ Ստալինին:

Այն հիանալի ընդունելութիւնը, որ ունեցան Հայաստանի Ֆիզիկուլտուրնիկներն այդ փառահեղ ցուցահանդէսին, մեզ շատ բանի են պարտաւորեցնում:


Մենք ամէն ջանք պէտք է դորձադրենք, որպէսզի միւս տարին, Ֆիզիկուլտուրայի հերթական չքահանգէսին, Հայաստանի սպորտամէնները մանակցեն էլ աւելի մեծ նուաճումներով: Այդ բանը իրագործելու համար մենք բոլոր հնարաւրութիւններն ունենք:

Հայաստանի Ֆիզիկուլտուրնիկները միշտ բարձր կը պահեն իրենց սպորտի դրօշը:

ՍԵՐԳՕ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆ

(Համաշխարհային ռէկորդամէն)





ՀՐԱՆՏ ՍԱՐԳՍԵԱՆ

Հայաստանի կուփամարտի ախոյեաններէն

# ՀՐԱՆՏ ՍԱՐԳՍԵԱՆ

ԱՊՍԳԱՅ ՃՕ ԼՈՒԻՍԸ

ԾԱՆՕԹ. ԽՄԲ. — Հետեւեալ բոլորակցութիւններն եւս երեւանէն դրկուած են յատկապէս մեր բերքին համար:

Բռնցքամարտը սպորտի ամենազօռար տեսակներից մէկն է. դա խիզախ, քաջ մարդկանց զբաղմունքն է, որոնք յաղթելու մեծ կամք եւ ձգտում ունեն: Այստեղից էլ պատահականութիւն չէ, որ մեր երիտասարդութիւնը այդքան սիրում է բռնցքամարտը: Պատահական չէ եւ այն հանգամանքը, որ Սովետական Միութեան ախոյեանական պատուական կոչումը բռնցքամարտի դժով ստացել է Հայաստանի «Սպարտակ» սպորտային ընկերութիւնը, Հրանտ Սարգսեանի զխաւորութեամբ:

Փաստն այն է, որ երկրի ուժեղագոյն բռնցքամարտիկների Համամիութենական մրցութիւնների ժամանակ առաջնութիւնը չահեց Հրանտ Սարգսեանը:

Սուք տանք ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Ֆիզկուլտուրայի եւ Սպորտի Կոմիտէի օրդան «Կրասնի Սպորտ» օրաթերթին:

«Պէտք է շեշտել յատկապէս սպորտի վարպետ Ա. Պապեանի աշակերտ, Երեւանցի, 19ամեայ Հրանտ Սարգսեանի յաջողութիւնները: 17 հանդիպումներից 15 յաղթանակ ունի այժմ Սարգսեանը: Անցեալ օրը եւս հանդիպում ունեցաւ Ուլքեկստանի ախոյեան, յարձակուող բռնցքամարտիկ Յինկի հետ: Երեւանցին թեթեւ, զեղեցիկ կերպով յաղթեց իր «հակառակորդին», ցուցաբերելով տարածութեան գերազանց զգացում, շարժունութիւն, վարպետութիւն, ոտքերի աշխատանքի մէջ եւ հանդիպակած հարուածներին մաքրութիւն: Ծարունակ փոխելով կուրի տարածութիւնը, Սարգսեանը ստիպեց Յինկին շարժումների մէջ առաջ հակուել, վրիպել եւ ապա ինքը, վայրկենապէս անցնելով հակադրոհի, ուղղակի հարուածներով հասաւ համոզիչ յաղթանակի»:

Այսպիսի բախտ վիճակուեց նաեւ Սարգսեանի միւս հակառակորդներին՝ սպոր-

տի վարպետ՝ Մոսկուացի Կլեպանովին, Բլոխինին, ՍՍՌՄ ախոյեան Կարակոզովին, Լենինգրադի ախոյեան Բոզդանովին եւ ուրիշներին:

Սարգսեանն ամենից առաջ խոհուն մարզիկ է. նա երբէք ի զուր տեղը չի ծախում իր ուժերը, արագ կողմնորոշուում է, անմիջապէս «որսում» հակառակորդի թոյլ կողմերը, հեշտութեամբ տանում նրա ուժեղ հարուածները եւ, մի որոշ մոմենտի, որը միայն իրեն է յայտնի, անցնում է գրոհի եւ ջախջախիչ հարուածներով նրա ճում յաղթանակը:

Հրանտ Սարգսեանը բռնցքամարտով սկսեց զբաղուել 1940 թուին, երբ դեռ 13 տարեկան էր եւ ամբողջովին նուիրուեց իր սիրած սպորտին:

Երկու տարուայ ընդմիջումից յետոյ (նրա մարզիչը՝ Պապեան զտնուում էր Կարմիր բանակի շարքերում), 1944ին, նա կրկնապատիկ եռանդով վերսկսեց բռնցքամարտի մարզանքները:

Նոյն թուի յունիսին բռնցքամարտի Համամիութենական մրցութիւններին առաջին անգամ հանդէս եկաւ երիտասարդ բռնցքամարտիկը եւ զբաւեց երրորդ տեղը իր հասակակիցների շարքում:

Այդ նոյն տարուայ աշնանը եւս զբաւեց երրորդ տեղը, բայց ոչ իր հասակակիցների, այլ մեծահասակ վարպետների շարքում:

1945 թուին Սովետական Միութեան բռնցքամարտիկի անձնական առաջնութեան մրցութիւններում Սարգսեանը նոր յաջողութիւն ձեռք բերեց, չահելով երկրորդ տեղը: Իսկ այժմ եւս Սովետական Միութեան ախոյեանների «Ապաղայ ՃՕ Լուիսն է», ինչպէս ասում է նրա մասին Սովետական Միութեան բացարձակ ախոյեան Վիկտոր Կորոլովը:

Էլի համեստ էնա, հանդիստ բնաւորու-

թեամբ, ինչպէս առաջ էր, բայց աւելի եւս խոհուն: Բացի իր Ֆիզիքական ունակութիւնները զարգացնելուց, նա այժմ աշխատում է տիրապետել եւ գիտութեան բարձունքներին: Նա յաջողութեամբ տրւեց քննութիւնները եւ այժմ ընդունուել է Երեւանի Պետական Համալսարանի իրաւարանական ֆակուլտետը:

— Կեանքում, — ասում է Հրանտ Սարգսեանը, — բացի ուժեղ բունցքներից, պէտք է ունենալ եւ մեծ գիտութիւն:

Յաղթելու այն կամքը եւ նպատակաւորումը, որ նա ձեռք է բերել մրցադաշտում, անպայմանօրէն կ'օղեն նրան դառնալ առաջաւոր իրաւարան, սովետական իրաւունքի լաւատեղեակ մասնագէտ:

## ՏԻ ԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԱՊԱԳԱՅ ԲՈՏՎԻՆՆԻԿԸ

Ի՞նչ կարելի է սպասել այն մրցումից, երբ շախմատի (նապրակ - echecs) սեղանի մօտ մի կողմից նստած է աշխարհի հրաշակաւոր շախմատիստներից մէկը, գրոսմէյստէր (մեծ-վարպետ) Կերեսը, իսկ միւս կողմը՝ բոլորովին անյայտ, 16 տարեկան մի պատանի, ոմն Տիգրան Պետրոսեան:

Բոլորը համոզուած էին, որ եթէ ոչ «Կինդեր մատ», այդ տեղի կ'ունենայ կայծակնային ջախջախում:

Բայց դործն այլ կերպ դասաւորուեց: Սաղը երկարեց: Գրոսմէյստերը լուրջ մրտածմունքի մէջ ընկաւ. Պետրոսեանը ոչ միայն ետ է մղում պատուարժան շախմատիստի գրոհները, այլ եւ յաճախակի անցնում յարձակման: Սաղը անցնում էր փոփոխական յաջողութիւններով:

Վերջապէս կատարուեց անսպասելին. խաղը վերջացաւ ոչ-ոքով: Իսկական մարտական ոչ-ոքի: Այս խաղը ճշմարտացիօրէն գնահատուեց, որպէս Պետրոսեանի անփիճելի յաղթանակը:

Եւ իրօք, մատաղահաս պատանու ոչ-ոքով խաղը այնպիսի մի վարպետի հետ, ինչպիսին է գրոսմէյստէր Կերեսը, յաղթանակ էր:

Որպէսզի պատկերացնենք պատանի շախմատիստ Պետրոսեանի արտասովոր ընդունակութիւնները, բաւական է թուել նրա տարած յաղթանակներից մի քանի փաստ:

1945 թուին Համամիութենական շախմատային տուրնիրում Պետրոսեանը գրաւեց առաջին տեղը:

Նոյն տարում ՍՍՌՄի շախմատային ա-

ռաջնութեան խաղում Պետրոսեանը բաժանեց առաջին եւ երկրորդ տեղերը:

1946 թուի սկզբին վրացական ՍՍՌի շախմատային շեմպիոնատում գրաւեց երկրորդ տեղը:

1946 թուի յունիսին, Հայկական ՍՍՌի շախմատային շեմպիոնատում չկորսնցնելով եւ ոչ մի խաղ, վաստակեց հանրապետութեան ախոյեանի կոչումը, յետեւում թողնելով Համամիութենական վարպետներ Գասպարեանին եւ Ֆրիդշտէյնին:

Այս հրաշալի յաղթանակներից մի քանի օր յետոյ Պետրոսեանը մեկնեց Լենինգրադ, մասնակցելու Համամիութենական պատանեկական ճատրկային մրցութիւններին, որտեղ առաջնութիւնը շահելու համար էին եկել Մոսկուայի, Լենինգրադի, Կիւեի, Դոնի Ռոստովի, Տալինի, Բազու, Թրիլիսիի եւ ուրիշ քաղաքների 16 ամենաուժեղ շախմատիստներ:

Երեք շաբաթ տևող յամառ մարտերի ընթացքում Պետրոսեանը մէկը միւսի ետեւից շահում էր խաղերը: 16 խաղերից Պետրոսեանը շահեց 14ը, եւ ոչ ոքի անելով մնացեալ երկուսը: Այս հիանալի յաղթանակի շնորհիւ, նրան շնորհուեց Սովետական Միութեան ախոյեանի կոչում:

Չնայած իր պատանի հասակին, Պետրոսեանը ունի տուրնիրային մեծ փորձ ու հիանալի տիրապետում է ճատրկային խաղի տեսութեանը:

Հայաստանի պատանի շախմատիստ, տաղանդաւոր Պետրոսեանին Լենինգրադում անուանում էին «Ապագայ Բոտլիննիկ»:





ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Հայաստանի հատրակի արտյեանը

# ԱՌՈՂՋԱՊԱԿԱԿԱՆ



## ԱՐԵԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹԻՒՆԸ

### ՄԱՐԵԱՆՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Արիւնի պաշտօնը — կեանքը դոյութիւն չի կրնար ունենալ եթէ յարատեւ փոխանակութիւն մը տեղի չունենայ ասպրող բջիջին եւ այն միջավայրին միջեւ՝ որուն մէջ կը դանուի ան: Այս փոխանակութիւններուն կը նախադասէ, եթէ կարելի է ըսել, արիւնը՝ որ իր շրջանը կատարելով մեր մարմինին մէջ, իրբեւ սննդատու հեղուկ, մէկ կողմէն բջիջներուն կուտայ այն թթուածինը զոր առած է թոքերէն եւ այն սնուցիչ տարրերը՝ զորս պատրաստելով իրեն տուած են մարսողական խողովակի բազմազան սպասարկութիւնները, իսկ միւս կողմէն երիկամունքներուն, լեարդի եւ այլ գործարաններու միջոցաւ դուրս կը նետէ այն անպէտ տարրերն ու թոյները, որոնցմով կը բեռնաւորուի իր շրջանառութեան ընթացքին: Այս փոխանակութիւններուն կարելի է տալ բջիջային կեանք անունը, ինչ որ ընդհանուր հասկացողութեամբ, բուն կեանքն իսկ է արդէն:

Բաց աստի, արեան շրջանառութեամբն է որ մարդկային կազմաւորութեան մէջ կը տարածուի ջերմութիւնը: Ծնորհիւ այս ջերմաբաշխ ֆառագայթարձակիւան (որ, իր կարգին, ենթակայ է որոշ գործարաններու մէջ տեղի ունեցող շրջառական գործունէութեան) մեր մարմինը միշտ ալ անփոփոխ կը պահէ իր ներքին տաքութիւնը, ինչ ալ ըլլայ զինքը շրջապատող արտաքին

ջերմութեան փոփոխութիւններու աստիճանը:

Այս երեք պաշտօնները — սննդատուական, զտիչ եւ ջերմաբաշխական — լրիւ կատարել կարենալու համար պէտք է որ արիւնը բազմաթիւ անգամներ եւ արագօրէն շրջան ընէ մեր հիւսկէններուն մէջ: Սիրտը, շնչերակները, երակները եւ մազերակներու ցանցը կ'ապահովեն այս պարտականութիւնը:

Արեան շրջանի գործողութիւնը կարելի է բացատրել հետեւեալ պարզ ու հասկանալի պատկերով: Սրտի աջ մասի առաջին յարկարաթիւնը (ventricule droit) արիւնը կը դրկէ թոքերուն: Հոս, արիւնը կը բեռնաւորուի թթուածինով եւ կը վերադառնայ սրտի ձախ մասի երկրորդ յարկարաթիւնը oreillette gauche): Ասկէ կ'անցնի նոյն մասի առաջին յարկարաթիւնը (ventricule gauche) որ զայն կը մղէ դէպի բոլոր գործարանները՝ մայր շնչերակի եւ անկէ ծնունդ առնող բոլոր ճիւղաւորումներու միջոցաւ: Մազերակներու ցանցին մէջ իր փոխանակումները կատարելէ յետոյ, կ'ալի ու կը մաքրէ հիւսկէններէն արտադրուած «աղբ» եւ իրբեւ սեւ արիւնը կը վերադառնայ սրտի աջ մասի երկրորդ յարկարաթիւնը (oreillette droite), անկէ անցնելու համար դէպի նոյն մասի առաջին յարկարաթիւնը եւ այդպիսով շարունակելու միեւնոյն շրջանառութիւնը:



Սիրտը խոռոչաւոր մկան մըն է: Այդ խոռոչներու ելքերուն եւ մուտքերուն հըրամայող լեզուակներուն շնորհիւ ան կը ստանձնէ ներաւելող եւ արտաւելող մեքենայի մը պաշտօնը, շատ կանոնաւոր եւ ներդաշնակ շարժումներով, որոնք կձկուամի (systole) եւ ընդլայնումի (diastole) պէսպիսութեամբ՝ սրտի զարկ անունը ստացած են: Այս սրտի զարկերը, հետեւեալ պատակերը կը ներկայացնեն մարդու մօտ, համաձայն տարիքի եւ հաշուելով մէկ վայրկեանի մէջ.

Օճն մէկ տարեկան	135 զարկ
1էն 2	110 ,,
2էն 5	105 ,,
5էն 8	95 ,,
8էն 20	85 ,,
20էն 80	70 ,,

Սրտի կձկումով մայր շնչերակին մըղւած արիւնի քանակը փոփոխական է ըստ պարագայի, որովհետեւ սիրտը երբէք ամբողջովին չի պարպուիր: Բայց, միջին հաշուով, այդ քանակը կը տարուբերի 50-էն 100 կրամի միջեւ:

Ծնչերակները առաձգական եւ կձկումի ընդունակ խողովակներ են, որոնք կարմիր արիւնը կը փոխադրեն մարմինին ամէն կողմը: Ծնչերակներու կձկումը ենթակայ է ջղային գրութեան:

Երակները սեւ արիւն փոխադրող խողովակներ են, որոնք շնորհիւ սրտի ներառակամ - քաշողակամ ուժին՝ մարմնոյն ամենահեռաւոր մասերէն կ'առնեն ապահանում արիւնը եւ զայն կը տանին դէպի սիրտը: Ասոնց պատերուն ներքին մասերուն մէջ գտնուող լեզուակները արեան դէպի ետ երթալը կ'արգելեն: Տարակոյս չկայ որ մկաններն ալ, աշխատանքի ընթացքին, իրենց պրկումներով կը նպաստեն արիւնի երակային շրջանառութեան ճիշտ այնպէս՝ ինչպէս կուրծքի վանդակը ընդլայնող ներշնչական իւրաքանչիւր շարժումը, որ մարմնոյն ծայրամասերէն դէպի կեդրոն արեան խուժումին պատճառ կը դառնայ:

Ջղային գրութիւնը մեծ դեր կը խաղայ սրտի եւ արիւնատար խողովակներու վը-

րայ: Սիրտը իրեն համար ինքնիշխան եւ իւրայատուկ ջղային գրութիւն մը ունի, որ կ'ապահովէ իր շարժումները՝ եթէ նոյն իսկ ան արուեստական կերպով կարուած ըլլայ կեդրոնական ջղային գրութեանէն: Բայց ասիկա շարդիւրեր որ սիրտը սերտօրէն կ'ապուած ըլլայ կեդրոնական ջղային գրութեան հետ՝ երկու իրարմէ տարբեր աղբիւրներէ ծնունդ առնող ջիգերու միջոցաւ: Ասոնցմէ մէկ մասը՝ որ սրտի շարժումները կը չափաւորէ, ծնունդ կ'առնածուծային կեդրոնէն, իսկ միւս մասը՝ որ անոր շարժումները կ'արագացնէ, ծնունդ կ'առնէ վիզին երկու կողմը գրտնուող եւ սէնիաքիփ կոչուող ջղային հանդոյցներէն: Եթէ առաջինները զրգիտի ենթարկուին, սրտի զարկերը աստիճանաբար կը դանդաղին եւ ի վերջոյ կը դադարին, իսկ եթէ երկրորդները զրգիտի ենթարկուին՝ սիրտը կը սկսի տարապայման կերպով արագ զարնել: Բնականոն պայմաններու մէջ, այս երկու ներհակ գրութիւնները կ'ապահովեն սրտի զարկերու կանոնաւորութիւնը՝ ըստ պահանջի դանդաղեցնելով եւ արագացնելով գտնոնք:

Ծնչերակներն ու երակներն ալ, իրենց կարգին, կը ստանան ջղային թելիկներ: Ասոնք ծնունդ կ'առնեն սէնիաքիփ կոչուած գրութեանէն: Այս ջղային թելիկները ըստ պահանջի եւ ըստ տուեալ պայմաններու՝ կը բայցնեն կամ կը նեղցնեն արիւնատար խողովակներու պատերը եւ այդպիսով կը սահմանափակեն կամ կը շտտցնեն արեան բաշխումը մարմինի որոշ մասերուն մէջ:

Այս դիտական հակիրճ ծանօթութիւնները անհրաժեշտ էին լաւ հասկնալու համար մարմնակրթմանքի ընթացքին երեւան էկոլ կարգ մը կենսաբանական երեւոյթները՝ արեան շրջանառութեան կապակցութեամբ, որոնց մասին պիտի խօսինք յաջորդ յօդուածով:

ՏԻՔ. Է. ԳԱԼՃԵԱՆ

Փարիզ  
28-10-1946

# Բ.Մ.Ը.Մ.ի ՅՈՒՇԱՏԵՏՐԵՆ

ՍԳ

**ԳՍՌԼՕ ՇԱՀԻՆԵԱՆԻ ՏԱՌԸ ԽՈՐՀ. ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ**

Հոկտ. 26ին, Հ.Մ.Ը.Մ.ի Առժամ. Կեդր. վարչութեան կողմէ, ի պատիւ Սերգո Համբարձումեանի եւ խորհրդ. մարզիկներու տուած ընդունելութեան, Գաղտնահիմեան կարգաց հետեւեալ ուղերձը:

Գերաշնորհ Սրբազան Հայր,  
Ազնուայարգ քաղաքացի Հինայէկեան,  
Մարզիկ եղբայրներ եւ յարգելի հանդիսականներ,

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդր. վարչութիւնը մեծ պատիւն ու բացառիկ բարեբախտութիւնն ունի ընդունելու խորհրդային յաղթական պիտոյեաններուն հետ, իր համբաւաւոր հայրենակիցը՝ Սարգո Համբարձումեանը, որուն յաղթանակներուն ի լուր հայ մարզիկներուն հետ արդար հպարտութեան մը իր բաժինով կը պարծենայ նաեւ ամբողջ հայ ժողովուրդը՝ երկրին մէջ թէ անկէ դուրս:

Կը ցաւինք որ ժամանակի պակասը թոյլ չտուաւ մեզ շատ աւելի մեծ շքանակի մէջ եւ արժանաւոր ընդունելութեան մը ընթացքին մեր սիրելի հիւրերուն ցոյց տալու եղբայրական ջերմ ու խանդավառ համակրանքը զոր հայ ժողովուրդը իր ստուար խաւերով կը տածէ հանդէպ իր հայրենիքի մարզիկներուն, որոնց ամենէն յաղթապանձ ներկայացուցիչը մեր մէջ ունենալու ուրախութիւնը կը վայելինք այս պահուստ յանձին Սարգո Համբարձումեանի եւ անկեղծ հիացումը զոր կը սնուցանէ հանդէպ Ռուս եւ Խորհրդային բոլոր մարզիկներուն:

Կը խնդրենք մեր յարգելի հիւրէն որ այս փոքր շքանակով չչափեն Հ.Մ.Ը.Մ.ի եւ հայ ժողովուրդին սէրն ու համակրանքը

իրենց հանդէպ: Կը հաւատանք եւ անվարան կը հաւատանք թէ Հ.Մ.Ը.Մ. իր բոլոր շքաններով, հարիւրաւոր մասնաճիւղերով՝ Ամերիկաներէն մինչեւ Պալքաններն ու Եգիպտոս եւ ամբողջ հայ ժողովուրդը մեզ հետ պիտի ուզէին ըլլալ այս պահուստ՝ մեզ հետ միասին հրճուելու ի ներկայութեան Խորհրդային Միութեան եւ Սովետական Հայաստանի կորովի: Եւակներուն եւ իրենց արդար բաժինը տանելու մեզ ընծայուած այս մեծ ու բացառիկ պատիւէն, պատիւ որուն թոյլ տուէք ըսելու աւելի ճիշտը քիչ մը ինքնագովութեամբ յայտարարելու թէ արժանի էր Հ.Մ.Ը.Մ.ը 30 տարիներու իր անընդհատ դործունէութեամբ հակառակ բոլորովին աննպաստ, դրեթէ քայքայիչ պայմաններու, հայ ժողովուրդին մէջ հիմնած եւ անվհատ հրահրած շարժումի, կորովի եւ ուժի իր դործով, հայրենասիրական իր անկեղծ ողիւով եւ մասնաւորաբար մեր սիրելի հայրենիքին հանդէպ իր անխախտ սիրով եւ հաւատարմութեամբ:

Թոյլ տուէք ինձ յայտարարելու նաեւ թէ Հ.Մ.Ը.Մ.ը արժանի էր այս պատիւին՝ մեծ յաւակնութեամբ մը զոր կը սրնուցանէ եւ կը ջանայ ի դին ամէն զոհարելութեան արդարացնել:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմը դրուեցաւ 1918ին, այն պահուն իսկ երբ վայրագ բռնատիրութեան մը հարուածներուն տակ տասա-

նորդուած ու կմախացած հայ ժողովուրդին աստանդական բեկորներուն համար՝ վերադարձը տակաւին երազ կը թուէր :

Եղբրական այդ օրերուն՝ նորածին Հ. Մ. Բ. Մ. ի վիճակուեցաւ զործունէութեան բոլոր ասպարէշներուն մէջ ի յայտ բերել հայ ժողովուրդին լաւազոյն բարեմասնութիւնները. — Մարզանք եւ դատարարութիւն, բիւրաւոր սրբերու օժանդակութիւն եւ եղբայրական օգնութիւն բոլոր վերապորոշներուն եւ վերազածողներուն, կազմակերպում հայ ժողովուրդին բարոյական եւ Ֆիզիքական առողջապահութեան ձեռնարկին :

Այսօր երբ հայրենիք վերադարձը լուսաւոր իրականութիւն մըն է այլեւս որ կը խանդավառէ մեզ բոլորս, Հ. Մ. Բ. Մ. կ'ուզէ եւ կը յաւակնի դառնալ մեր հայրենիքին Ֆիզիկալութեան վարչութեան շարունակութիւնը, այլ խօսքով՝ անոր մասնաճիւղը՝ դաղութներու մէջ :

Անխախտ սէրը որ մեզ կը կապէ ու կը միացնէ հայրենիքին, անհրաժեշտօրէն կը փնտռէ իր զործնական արտայայտութեան եղանակները : Օգտուիլ հայրենիքի մարդական յոռաճիւթութիւններէն եւ մեր կարգին՝ օտար միջավայրերու մէջ՝ մեր փորձառութիւնները տրամադրել անոր, առաջնորդուիլ անոր ցուցմունքներէն եւ մեր տասնեակ հազարաւոր եղբայրները ջերմ հետաքրքրութեամբ կապել հայրենիքի մարդական շարժումին, մեր բիւրաւոր պատանիններուն եւ երիտասարդներուն դատարարակութիւնը թարմացնել հայրենիքի կենդանի շունչով եւ թոյլ տալ մեզ, մեզ տրամադրելով ամէն կարելի միջոց որ հայրենիքի եւ Միփոքի մարդիկներուն միջեւ ստեղծելով սերտ գործակցութիւն, երկու կազմերը շաղախենք եւ ի մի ձուլենք եղբայրական նոյն ողիով եւ նոյն զործունէութեան նպատակներով :

Միւրեւի եղբայր Հինայէկեան, թոյլ տուէք նախ որ օգտուիմ առիթէն ձեզ յայտնելու յանուն Հ. Մ. Բ. Մ. ի Կեդր. Վարչութեան, ջերմ ջորհակալութիւններս՝ պատուին համար զոր մեղընծայեցիք, ընդունելով Հ. Մ. Բ. Մ. ի պատուոյ անդամակցութիւնը եւ ձեզմէ խնդրելու որ

մեր սրտարուխ բաղձանքներու թարգմանը հանդիսանաք մեր կառավարութեան եւ Ֆիզիկալութեան վարչութեան մօտ :


Եւ սիրելի եղբայր Համբարձումեան,

Իբր Հայաստանի մարդիկներու փառապանծ ներկայացուցիչը՝ ձեր անձին մէջ, այս պահուս մեր երկրին կորովի եղբայրներն է որ կը տեսնենք : Տարիներ ամբողջ ձեր յաղթանակներով մենք եւս հետուէն հպարտացանք նոյնքան յուզումով որքան Հայաստանի մեր եղբայրներն ու քոյրերը, եւ ջերմ հետաքրքրութեամբ կը հետեւինք անօրինակ վերելքին՝ զոր մեր կառավարութեան աջալուրջ հսկողութեամբ եւ առաջնորդութեամբ կը կատարեն մեր մարդիկ եղբայրները իրենց սեփական մարդին մէջ եւ ամբողջ երկիրը հանրային գործունէութեան բոլոր մարզերուն մէջ :

Յանուն Կեդր. Վարչութեան, կը խնդրեմ որ բարի ըլլաք մեր անվերապահ հիացումին հետ, մեր սրտարուխ ողջոյնները հաղորդելու մեր մարդիկ եղբայրներուն եւ անոնց քաջարի առաջնորդներուն եւ յայտնելու բոլորին թէ Հ. Մ. Բ. Մ. ը իր նշանարանին տակ — Բարձրացի՛ր, բարձրացի՛ր — կը մնայ միշտ պատրաստ, ամէն ժամ, ամէն տեղ՝ ծառայելու հայրենիքին եւ ժողովուրդին :

Եւ դուք սիրելի խորհրդային եղբայրներ՛ր, հպարտութեամբ եւ յուզումով է որ կ'ողջունենք մեր մէջ ձեր ներկայութիւնը՝ զոր միայն բացառիկ պատիւ մը չէ որ կը նկատենք մեզ համար, այլ մանաւանդ անհերքելի նոր մէկ ապացոյցը այն համակրանքին ու անխախտ բարեկամութեան զոր հայ ժողովուրդն ու հայրենիքը պատանուս մեծ ժողովուրդին եւ Խորհրդ. Միութեան բոլոր երկիրներուն մէջ :

Կը խնդրենք որ փոխադարձ եւ հաւատարիմ բարեկամութեան տաք յիշատակներով վերադառնաք հայրենիք, ձեզ հետ տանելով փոքր, շատ փոքր մեր մէկ նուէրը, բայց իբր խորհրդանշան այն ջերմ համակրանքին ու խանդավառ զգացումներուն զոր դաղութներու հայ ժողովուրդը կը տածէ հանդէպ Խորհրդային Միութեան :



Խ. Միուրեան մարզիկներու եւ Սաֆո Համարձուսեանի ի պատիւ  
Հ. Մ. Ը. Մ. ի կերպարանի կողմէ փարիզի մէջ սարքուած Գինեձօնը

Խորհրդ. Հայաստանի վարիչները լաւ ըմբռնած են թէ՛մեր ժողովուրդին ազա-  
զան ամբօրէն դարբնելու համար պէտք  
ունին կայտառ եւ աղնուացած, մարմնով  
եւ մտքով մարզուած նոր սերունդի մը :  
Բախտը ունեցանք մեր հայրենիքի մէջ  
ապրելու մէկ ամիս, տեսնելու մեր եղ-  
բայրները եւ քոյրերը եւ խանդավառուե-  
լու անոնց դործերով :

Մեր երկրին բնակչութեան մէկ հինգե-  
րորդը կ'ուսանի եւ կը մարզուի : Մեր ե-  
րիտասարդութիւնը անցեալի ժառանգու-  
թեամբ, ներկայի վերելքով, ազազայի  
յոյսերով, կը քալէ ճակատը բարձր եւ  
ժպիտը երեսին, կ'աշխատի, կը սորվի եւ  
կը մարզուի, իր մտքին ու մասններուն  
աշխատանքովը ծաղկեցնելու համար հայ-  
րենի հողը :

Հարիւրաւոր տարիներէ ի վեր չարչար-  
ւող մեր ազգը այսօր դտեր է : Նորհիւ  
Խորհրդ. մեծ Միութեան, իր փրկութեան  
նաւահանդիսը եւ միջոցը ապրելու իր  
յառաջադէմ ժողովուրդ մը :

Ազատ էին իմ ունեցած տեղեկութիւն-  
ներս Խորհրդ. Հայաստանի մարմնակրթ-  
թանքին մասին : Մեզի հասած հատու-  
կտը լուրերը եւ թերթերէ առնուած տե-  
ղեկութիւնները զոհացում չէին տար մեր  
հետաքրքրութեան : Ուրախ եմ ըսելու որ  
ինչ որ հաստատեցի անձամբ լայնօրէն կը  
դերաշանցէր իր աղնկալութիւններս :

Մեկնելէ առաջ մտաւախութիւնը ունէի  
որ զուցէ Հայաստանի երիտասարդութիւ-  
նըն ալ նմանի արտասահմանի մեր նոր սե-  
րունդին, որ կը տղեղնայ եւ հասակով կը  
կարճանայ : Յունիս Վիէն երբ մեր ոտքը  
դրինք հայրենի հողին վրայ, կը խոստո-  
վանիմ որ չէնքերէն ու սրդպատներէն ա-  
ւելի կը դիտէի բնակչութիւնը, երեխանե-  
րը : Ժամը 5.30ին երբ հասանք մեր պան-  
դոկը եւ վաղեցինք պատշգամբ, տեսնելու  
Արովեան փողոցի եռուղեք, երկարօրէն  
դիտեցի երիտասարդութեան կոհակը,  
մանչերու եւ աղջիկներու խումբերը որոնք

յամբօրէն կը յառաջանային, բարեձեւ ու  
հասակաւոր :

Յաջորդ առաւօտ առաջին դործս եղաւ  
այցելել Ծիլկուլուտուրայի վարչութեան :

Արովեան փողոցին վրայ չորս յարկանի  
մեծ շէնքի մը մէջ է ան, ամէն տեսակ  
յարմարութիւններով օժտուած : Ունի ձը-  
մեռնային մեծ մարզասահ մը, առաջին  
յարկը ձմեռնային լողարան (բիսին) մը,  
տաք եւ պաղ տուշեր, աղուժք, ճաշարան,  
ննչարաններ, դրասենեակներ եւ սրահներ  
դասախօսութեանց համար : Ամէն կողմ կը  
տիրէ եռուղեք, մտնող ելլողներու անվերջ  
շարան մը, ամէնն ալ երիտասարդներ, ո-  
րոնք ժպիտով կը բարեւեն ու կ'անցնին :

Կը բարձրանանք սանդուղներէն ու զիս  
կ'առաջնորդեն սպասման սրահ մը ուր  
քանի մը վայրկեան վերջ կը մտնէ Հայկ  
Գարսատանեան, Մարմնակրթական ու-  
սումնարանի տնօրէն, թիկնեղ ու բարձրա-  
հասակ երիտասարդ մը, որ բարի գալուստ  
մաղթելով իր ուրախութիւնը կը յայտնէ  
որ առաջին այցելութիւնս իրենց համար  
եղած է, եւ զիս կ'առաջնորդէ իր գրա-  
սենեակը : Այնտեղ իրարու կը հանդիպին  
մեր լուռ նայուածքները, փոխադարձ հե-  
տաքրքրութեամբ բեռնաւորուած : Վեր-  
ջապէս կը խղէ ան լուսութիւնը եւ կը հար-  
ցնէ մեր արտասահմանի մարդիկներու  
մասին, եւ ես երկարօրէն կը պատմեմ,  
մինչ հետզհետէ ներս կը մտնեն բժիշկ  
Սիմոնեան, փոխ-նախագահ Հայաստանի  
մարմնակրթութեան Կեդր. Կոմիտէի, Եր-  
ուանդ Մարտիրոսեան, Հայաստանի ըմ-  
բշամարտութեան ընդհ. մարզիչ, Գուր-  
գէն Մալխասեան, համամիութենական  
մարմնակրթանքի մարզիչ եւ դատաւոր,  
Գէորդ Ալիխանեան, եւն. : Երկարօրէն կը  
խօսինք ամէնքս, մինչ ժամերը կը սահին  
եւ ի վերջոյ կը մեկնիմ, ժամադրուելով  
երեկոյեան համար, աւելի մօտէն ծանօ-  
թանալու այն ամէն բաներուն հետ որոնք  
կը կապուին մեր սիրած գործին :

Հայաստանի մարմնակրթանքի կազմա-

կերպութիւնները երեք մասի կը բաժնուին .

ա) Զանազան կազմակերպութիւններ (միութիւններ), ինչպէս Դինամօ, Սպարտակ, Կառուցող Պիչչէվլիկ, Կոլխոշներ, Սոլխոզներ, Սեդիկ, Լոքոմոթիվ, եւն . :

բ) Շրջանային կազմակերպութիւններ, ինչպէս է Երևան, Ղուկասեան, Լենինական, Նոր Բայազետ, Մարտունիի շրջան :

գ) Վարժարաններ . Ուսումնարան (կիմնադիւ), Թէքնիքական, Ժողովրդական կրթութեան մարմնակրթանքի դպրոցը, Երևանի Մոլոտովեան մանկական մարմնակրթանքի դպրոցը, Լուսաւորութեան ժող. կոմիսար. կեդր. մարմնակրթանքի դպրոցը, Երևանի ժողովրդական կրթութեան բաժնի մարմնակրթանքի դպրոցը, եւ այլն :

Բոլոր վարժարաններու աշակերտները առանց բացառութեան սպարտաւորիչ կերպով կը հետեւին մարմնամարզի, յետ բժշկական քննութեան :

Մարզանքի մասնագէտ ուսուցիչներ կան բայց բաւարարութիւնչեն տար եղած պահանջերն :

Այս տարի կը բացուի Խ. Հայաստանի մէջ մարմնակրթանքի ուսուցչանոց երեք տարուայ դասընթացքով, ուրտեղ պիտի պատրաստուին մասնագէտ ուսուցիչներ մարմնակրթանքի բոլոր ճիւղերուն համար : Առաջին տարուան համար նախատեսուած են 100 աշակերտներ :

Մոսկուայի կեդրոնական կառավարութիւնը 10 միլիոն ռուպլիի պիւտճէ մը տրամադրած է :

Խ. Հայաստանի մէջ մարմնակրթանքի վերին մարմինն է Ժողկամսովետիմ կից ֆիզկուլտուրայի եւ սպորտի գործերի կոմիտէն, որուն նախագահն է Աղասի Զարչոզեան . Ա. տեղակալ եւ վարիչ՝ Գրիգոր Սիմոնեան . Բ. տեղակալ եւ մասնագէտ մարզիչ՝ Հայկ Գարսատանեան (Մարմնակրթական ուսումնարանի տնօրէն) . Գէորգ Ալիխանեան, սրօտի բաժնի վարիչ :

Գաղափար մը տալու համար մարմնա-

կրթանքի մէջ ձեռք բերուած արդիւնքներուն մասին, ստորեւ յիշենք հետեւեալ չափանիշերը .

ԾԱՆՐՈՒԹԻՒՆ (Ծանր քաշի համար)

1. Սեղմում երկու ձեռքով՝ 136 քիլ . 050 կրամ, Համբարձումեան Ս. (Համամիութենական չափանիշ) :

2. Պոկում երկու ձեռքով՝ 132 քիլ . 450 կրամ, Համբարձումեան Ս. (Համամիութենական չափանիշ) :

3. Պոկում ձախով՝ 100 քիլօ, Համբարձումեան Ս. (Համամիութենական եւ համաշխարհային չափանիշ) :

4. Եռամբցում (սեղմում, պոկում եւ հրում)՝ երկու ձեռքով՝ 433 քիլ . 500 կր . Համբարձումեան Ս. (Համամիութենական չափանիշ) :

Կիսամանր քաշի համար

Պոկում ձախով՝ 95 քիլ . 850 կր ., Մանուկեան Ռուբէն (Համամիութենական եւ համաշխարհային չափանիշ) :

1944ԻՆ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՀԱՅՈՑ

ՍՍՍԱԾ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ

Մարմնամարզուիւմ

Հայաստանի պատանի մարմնամարզներու խումբը զբաւած է ընդհանուրին մէջ 3րդ տեղը :

Աղջիկներու խումբը առանձին, Մոսկուայէն ետք, զբաւած է 2րդ տեղը :

Պատանիներու խումբը՝ 3րդ տեղը :

Թեթեւ քաշի քիւմ

Պատանիներու խումբը զբաւած է 2րդ տեղը :

Բարձրութեամբ ցատկելու անհատական մրցումներուն առաջին տեղը զբաւած է Նովոսելով, 155 սմ . արդիւնքով :

Նոնակի նետման մրցումներուն առաջին տեղը զբաւած է Մովսիսեան, 50 մէթր 58 սմ . արդիւնքով :

Գնդի հրման մրցումներուն առաջին տեղը զբաւած է Մովսիսեան :



Բռնցքամարտ

Երբորդ անհատական տեղը զբաղած է Սարգիսեան Գ. (թեթևադոսն քաշ) :

Հայաստանեան զանազան մրցանիշներ (մինչև 1 Յունուար 1945) .

Վաղք 60 մէթր, 7,3 վայրկեան, Կարատեև Ա. 100 մ., 11,2 վ., Ստեփանեան Ա. 200 մ., 22,3 վ., Բաղդասարեան Վ. 300 մ., 37,9 վ., Ստեփանեան Ա. 400 մ., 54,7 վ., Բարխուդարեան Ա. 800 մ., 2,04,9 վ., Արտյուխով Լ. 1.000 մ., 2,47 վ., Արտյուխով Լ. 1.500 մ., 4,19 վ., Արտյուխով Լ. 3.000 մ., 10,07 վ., Արտյուխով Լ. 5.000մ. 17,09 վ., Ջալալեան Լ. 10.000 մ., 35,30,2 վ., Բասոս Պ. 110 մ. արդելարչաւ, 18,6 Պարոնեան Գ. 200 մ., 27,9, Ստեփանեան Ա. 400 մ., 1,03,3, Սուլարեան Յ. ձեպատւրհանդակավաղք, սուրհանդակային վաղք 4x100, 46,2, Ստեփանեան Ա., Սուլարեան Յ., Վանեան Մ., Սաֆարեան Ա. 5x1000, 14,37, Սուլարեան Յ., Մկրտիչեան Խ., Լխտակով Ռ. 800+400+200+100, 3,37,7, Արտյուխով Լ., Կոթեմիշիկով Ի., Բաղդասարեան Վ., Դաւիթեան Ա. :

Յատկել. — Տեղից երկարութեամբ, 2,95 ստ., Ջորեան Հ. Երկարութեամբ վաղքով, 7,08, Սահարեան Ա. Բարձրութեամբ տեղից, 1,39, Բունիաթեան Ա., Բարձրութեամբ վաղքով, 1,75, Սանարեան Ա. Եռացատկ տեղից, 8,84, Սանարեան Ա. Եռացատկ վաղքով, 13,21, Բարխուդարեան Ա. Բարձրութեամբ ձողով, 3,5, Բարխուդարեան Ա. :

Նետումներ. — Նունակ, 70,04 ստ., Սամուէլեան Գ. նիղակ, 46,70, Արոյեան Պ. Սկաւառակ, 40,38, Համբարձումեան Ս. Մուրճ, 40,51, Համբարձումեան Ս. Գնդի հրում, 13,64, Համբարձումեան Ս. :

Այս մրցանիշները բոլորն ալ հաստատւած են Երեւանի մէջ 1934էն 1944:

Հոսկուտամ նաև արտասահմանի մրցանիշները, որոնց բաղդասարութիւնը պիտի բնեմ յետոյ :

60 մէթր վաղք, Մեխտոնեան, 7 1/5:  
100 մ. վաղք, Յ. Երամեան, 11 1/10:  
200 մ. վաղք, Յ. Մամիկոնեան, 24":  
400 մ. վաղք, Ն. Ճէլալեան, 55 1/5:  
800 մ. վաղք, Ս. Սամուէլեան, 2'11"1/5:  
1.500 մ. վաղք, Հ. Իսկէնտէրեան, 4,36:  
3.000 մ. վաղք, Յ. Մամիկոնեան, 10.2.2/5

Գրոշարչաւ. — 4x100, Փարիզի մասնաճիւղ, Յ. Մամիկոնեան, Սինէմեան, Պ. Ջաբրէեան եւ Վ. Թէրդեան, 48.3/5:

110 մ. ցանկարչաւ. — Ն. Ճէլալեան, 18.2/5:

Ուժով բարձրութիւն ցատկել. — Յ. Երամեան, 1 մ. 73 սմ.:

Կեցած բարձր. ցատկել. — Ա. Քոստիկեան, 1 մ. 40:

Ուժով երկարութիւն ցատկել. — Յ. Երամեան, 6 մ. 71:

Երեք քայլ ցատկել. — Յ. Երամեան, 13 մ. 37:

Չողով բարձրութիւն ցատկել. — Յ. Մամիկոնեան, 3 մ. 66 սմ.:

Երկաթ նետել. — Ժ. Խտիկեան, 12 մ. 84:

Սկաւառակ նետել. — Մ. Մկրեան, 35 մէթր 99:

Նիղակ նետել. — Բժ. Թաշճեան, 50 մէթր 0.5:

300 մ. վաղք. — Հ. Սողիկեան, 38 ե.վ. 1/10. 1.000վաղք, Մոմճեան, 3 վ. 3 ե.վ.:

Աթլէթիզմը խաղերուն ամենէն զթուար եւ ապերախտն է, որովհետեւ հաւաքական չէ. անհատական ճիղին արժէքն է որ երեւան կուզայ: Պէտք է երկար փորձել, յարատեւութիւն եւ կամք ունենալ հասնելու համար արդիւնքի:

Պէտք է ըսել որ կը պակսին, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Խ. Միութեան մէջ կարող մասնագէտներ թէքնիքի եւ թարթիքի ուղղութիւն տուող: Պիտի կարողանան լրացրնել այդ պակասը երբ յարաբերութեան մտնեն Եւրոպայի եւ մանաւանդ Միացեալ Նահանգներու մարզիկներուն հետ:

Մարզիկ մը տեսնելով շատ բան կրնայ սորվիլ, նմանապէս չլիման մէջ մտնելով ասիկի զօրաւորներու հետ եւ մրցելով:

Օրինակով խօսինք.

Հայաստանի մէջ 60 մէթրը կը վազեն 7 3/5ով. իսկ Մարսէլի մէջ Մելտոնեան վազեց 60 մէթրը 7 1/5ով: 100 մէթրը Ստեփանեան (Հ.) 11 2/10, Երամեան (արտ.) 11 1/10, իսկ աշխարհի մրցանիչն է 10 2/10 (Օվընս, Մ. Ն.):

200 մ. վազք. — Բաղդասարեան (Հ.), 22 3/10. Մամիկոնեան (արտ.), 24:

Բաղդասարեանի արդիւնքը լաւ է, նոյն իսկ միջազգային տեսակէտով, երբ բաղդասարեան անենք Եւրոպայի շատ մը երկիրներու չափանիչները: Աշխարհի չափանիչն է 20 3/10 (Օվընս, Մ. Ն.):

300 մէթր վազք. — Ստեփանեան (Հ.), 37 9/10, Մելտոնեան եւ Սողիկեան (արտ.) 38 1/10: Գէշ չէ իրրեւ արդիւնք, բայց շատ հեռու է միջազգային չափանիչէն, 34 2/19 (Թոլան, Մ. Ն.):

400 մ. վազք. — Բարխուդարեան (Հ.), 54 7/10. Ն. Ճէլալեան (արտ.), 55 1/9. աշխարհի մրցանիչ՝ 46 1/10: Միջազգային տեսակէտով ոչ մէկ արժէք կը ներկայացնէ, երբ նկատի առնենք որ, Ողիմպիական խաղերուն մասնակցելու համար մարզիկ մը 400 մ. վազքի համար պէտք է որնուազագոյն 49 ե.վ. վազէ:

Վերջերս 400 մէթր վազքի մրցանիչները կոտրեցան, բայց պատերազմի առիթով վաւերացուած չեն:

800 մէթր վազք. — Արտյուխով Լ. (Հ.), 2,04,9/10. Սամուէլեան (արտ.), 2,11,1/5. աշխարհի մրցանիչն է 1,40,8/10 (Համբսոն, Անգլիա): Իսկ 1939ին Հարպինկ (Գերմ.) կոտրեց աշխարհի մրցանիչը 1,39,2/10ով. վաւերացուած չէ դեռ:

1000 մէթր վազք. — Արտյուխով (Հ.), 2,47 ե.վ.: Մոմճեան (արտ.) 2,49,15? Այս հեռաւորութիւնը Ողիմպիական խաղերուն յայտարարին մաս չի կազմեր:

1500 մէթր վազք. — Արտյուխով (Հ.), 4,19,— Իսկէնտէրեան (արտ.) 4,36 աշխար-

հի մրցանիչ՝ 3,47,8/10 (Լովըլօք, Նոր Զելանտա): Յաջորդարար կոտրեցին այս մրցանիչը թէ՛ Գերմանացի Հարպինկ եւ թէ՛ Շուեհացի Էրկու մարզիկներ, բայց դեռ վաւերացուած չեն:

3000 մէթր վազք. — Արտյուխով (Հ.), 10,07. Մամիկոնեան (արտ.), Պոլիս), 10,2, 2/5. աշխարհի մրցանիչ՝ 8,18,6/10, Իսօ Հօլլօ (Ֆինթոմօմէնէն, Ֆինլ.) եւ Սալմի-նէն (Ֆինլ.): Այս հեռաւորութիւնն ալ Ողիմպիականի մաս չի կազմեր. կայ 3000 մէթրի վազք մը, բայց ցանկարչաւ է եւ ոչ թէ պարզ վազք:

5000 մէթր վազք. — Ջալալեան (Հ.), 17 վ. 09 ե.վ. արտասահմանը չունի ոեւէ մրցանիչ. աշխարհի մրցանիչ՝ Լէթինին (Ֆինլ.), 14 վ. 17 ե.վ.: Ներկայիս Շուէ-ացի երեք վազողներ կոտրեցին այս մրցանիչները հասնելով 14 վայրկեանի. բայց չեմ կարծեր որ վաւերացուին, նկատի ունենալով որ այս մարզիկները կը ստանան դրամ, որով սիրողներ չեն:

10.000 մէթր վազք. — Բասոս Պ. (Հ.), 35 վ. 30 2/10. արտասահմանի մէջ այս վազքը տեղի ունեցած չէ. միջազգային՝ Նիւոմի (Ֆինլ.), 30,6,2/10:

110 մէթր արգելք-վազք. — Պարոնեան Գ. (Հ.), 18,6/10. Ճէլալեան (արտ.) 18, 2/5. միջազգ.՝ 13,7/10 (Պարտ, Մ. Ն.): Բժ. Թաշճեան վազած է Իտալիոյ մէջ եւ կոտրած է այս մրցանիչը, 16,4/10, բայց հովը կոնակէն ըլլալուն վաւերացուած չէ:

200 մէթր արգելք-վազք. — Պարոնեան Գ. (Հ.), 27,9/10. արտասահման չունի ոեւէ մրցանիչ. միջազգ.՝ Սալինկ (Մ. Ն.): Այս մրցումը Ողիմպիական խաղերուն յայտարարին մաս չի կազմեր եւ ոչ ալ միջազգային հանդիպումներուն:

400 մէթր արգելք-վազք. — Սուվարեան (Հ.), 1 վ. 03 3/10. արտասահմանի մէջ չենք ունեցած ոեւէ վազող. վազքերէն ամենէն դժուարինն է: Միջազգ.՝ Հարաին, 52,4/10: Կայ նաեւ Իրլանտացի Թիլոտալի վազքի ապշեցուցիչ արդիւնքը, 50,6/10, որ դեռ վաւերացուած չէ:

4×100 դրոշարչաւ. — Հայաստան՝ 46. 2/10, Ստեփանեան, Սոււլարեան, Վանեան, Սաֆարեան: Արտաս.՝ 48,3/5, Փարիզի մասնաճիւղ. Յ. Մամիկոնեան, Ս. Սինէմեան, Պ. Չաքըճեան եւ Վ. Թէրզեան: Միջազգ.՝ 39,8/10, Միաց. Նահանգներ, Օվընս, Մէթուալֆ, Վիլքոֆ, Տրարըր. այս մրցանիչը հաստատեցին 1936ի Պերլինի Ողիմպիականին. արդիւնքը ապշեցուցիչ է, որովհետեւ ամէն վաղուղ 10 ե.վ.էն նուազ վաղած է:

4×400 դրոշարչաւ. — Հայաստան այս վազբը տեղի ունեցած չէ. կը կարծեմ թէ պէտք եղած մարզիկները չեն ունեցած, որովհետեւ 400 մէթր վազբը շատ դժուար է: Աշխարհ՝ 3 վ. 9 ե.վ., Անգլիա, Վոլֆ, Ռամբրինկ, Ռօպէր, Պրաուն: Բայց 1936ին Ամերիկեան ազգ. խումբը կօտրեց այս չափանիշն ալ 3 վ. 8 ե.վ.ով: Հոս ալ կը տեսնենք արտակարգ արդիւնք: Երբ նկատի առնենք որ Հայաստանի մէջ կը վաղեն 54 7/10ով. իսկ Ամերիկայի ազգ. խումբի չորս մարզիկները նոյն հեռաւորութիւնները կը վազեն՝ Քակլ, 46 ե.վ., Եունկ 47 ե.վ., Օ'Պրիէն, 48 ե.վ. եւ Ֆրիդ 47 ե.վ. 1/10ով: Շատ հեռու ենք միջազգային մարզիկներու արդիւնքէն:

5×1000 դրոշարչաւ.— Հայաստան, 14,38 Սուլարեան, Մկրտիչեան, Լիսակով, Սուլալեան, Կարալյով: Այս վազբին առաջին անգամն է որ կը հանդիպինք, որովհետեւ միջազգային մրցումներ կան բայց 4×1000, որով զազափար մը չենք կրնար կաղմել արդիւնքի մասին. նախնորելի է որ փոխանակ 5×1000ի, վազէին 4×1500, որ թէ՛ կրնար 1500 մէթր վազողներ պատրաստել եւ թէ՛ մրցանիչ մը ունենալ որ թոյլ տար բազդատել ուրիշ ազգերու հետ:

800+400+200+100 (Հայ.) դրոշարչաւ 3.37.7/10. Ողիմպիական դրոշարչաւ կը կոչուի այս մրցումը. Արտյուխով, Կոժեկնիկով, Բաղդասարեան, Դաւթեան: Միջազգային մրցանիչը դժուարութիւն չունի. զանազան ազգերու միջեւ կատարուած մրցումներու ընթացքին երբեմն կը վազեն այս դրոշարչաւը:

Տեղէն երկարութիւն ցատկի (կամ կեցած). — Հայ.՝ 2 մ. 95 սմ., Չորեան: 1924էն ի վեր Միջազգային Աթլէթիզմի Համադաշնակցութիւնը արդիւնք է այս մրցումը, նկատի առնելով որ ճիշդ շատ կայ առանց որոշ արդիւնքի. նմանապէս կեցած բարձրութիւն ցատկելը: Կեցած բարձրութեան Հայաստանի մրցանիշն է 1 մ. 39, իսկ արտասահմանիւր՝ 1 մ. 40 (Քոստիկեան, Պոլիս). միջազգայինը՝ 1 մ. 67 (Մ. Նահանգներ):

Ուժով կամ ուժ առած երկարութիւն ցատկի. — Հայ.՝ 7 մ. 08, Սաֆարեան Ա. արտասահման՝ 6 մ. 71, Յ. Երամեան (Պուլկարիա): Աշխարհի մրցանիչը՝ 8 մէթր 13. Օվընս (Մ. Ն.):

Այս արդիւնքը բազդատարար միւսներէն լաւ է. նկատի ունենալով որ Ողիմպիականի մասնակցելու համար 7 մէթր ցատկելը պայման է:

Ուժ առած բարձրութիւն ցատկի. . . Հայ.՝ 1 մ. 75, Սաֆարեան. արտասահման, Յ. Երամեան (Պուլկարիա), 1 մէթր 73. աշխարհ.՝ 2 մ. 06, Մարթիյ (Մ. Նահանգներ): Ճօնարն սեւամորթը ցատկած է 2 մ. 09, բայց վաւերացուած չէ իրբեւ մրցանիչ. հոս ալ տկար է իրբեւ արդիւնք, երբ նկատի առնենք միջազգային զանազան արդիւնքները. նուազագոյն պէտք է ցատկել 1,85 կամ 1,90:

Չողով բարձրութիւն ցատկի.— Հայաստան՝ 3 մ. 55, Բարխուդարեան. արտասահման՝ 3 մ. 66, Յակօր Մամիկոնեան. յիշեալ մարզիկը արտասահմանի լաւագոյնն է, որովհետեւ երկու անգամ Փրանսական ազգային խումբին մասնակցած է եւ այս մրցանիչը հաստատած է Գօլոմպի մարզադաշտին վրայ: Աշխարհի մրցանիչէն շատ հեռու ենք. 4 մ. 39, Պրաուն (Մ. Ն.): Եւրոպայի մէջ 11 մարզիկներ կան որոնք 4 մէթրը կ'անցնին. իսկ Միացեալ Նահանգները 14 մարզիկ որոնք կը ցատկեն 4 մէթրէ աւելի. օրինակ՝ Մատուս (4 մ. 35). կան նաեւ երկու Ճարոնցիներ,

Նիշիտա (4 մ. 25) եւ Նամպի (4 մ. 31),  
եւ այլն:

Երեւ քաղաքի ցառակի (Հայաստան կը կոչեն այս մրցումը՝ Երեւանի վաղըսկ կամ տեղից տեղէն ցառակը գոյութիւն չունի 1912էն ի վեր) — Հայաստան՝ 13 մ. 21, Բարխուդարեան արտասահման՝ 13,37, Յ. Երամեան միջազգային՝ 16 մ. Թաթրմա (Ճարմոն), Հարատա (Ճարմոն), 15մ. 66, Մէթրաֆ (Ա.), 15.50. Իրբեւ արդիւնք գոհացուցիչ է միջազգային տեսակէտով, որովհետեւ Նոյնիսկ այսօր Ֆրանսայի մէջ մէկ մարդիկ կայ որ այս արդիւնքին կըրնայ հասնիլ:

ՆԵՏՈՒՄՆԵՐ, ԿԱՄ ԱՐՁԱԿԵԼ

Նոնակ — Հայաստան՝ 70 մ. 04, Սամուէլեան Գ.: Արտասահմանի մէջ գոյութիւն չէ ունեցած այս մրցումը, որովհետեւ զինուորական պատրաստութեան բընոյթ ունի. նմանապէս քար նետելը, որ 1922էն ի վեր հրապարակէն հանուած է միջազգային մրցումներուն մէջ:

Նիզակ — Հայաստան՝ 46,70, Արոյեան արտասահման՝ րժ. Թաշճեան (Իտալիա), 50 մ. 05 (Փարիզի Նաւասարդեան խաղերուն 1927ին). միջազգային՝ 76,66, Ժարվինէն (Ֆինլ.). միեւնոյն մարդիկը նետած է, 1935ին, 78,80, բայց վաւերացւած չէ: Շատ հեռու ենք միջազգային արժէք ներկայացնելէ. Նուազագոյն պէտք է 60 մէթրը անցնիլ Ողիմպիականի մասնակցելու համար:

Գունտ (կամ երկաթ) նետել (կամ արձակել, հրել). — Հայաստան՝ 13 մ. 64, Համբարձումեան Ս. արտասահման՝ 12,84, Ժ. Ստիկեան. միջազգային՝ 17,84, Թորանս (Մ.Ն.): 14 մէթր հընէն է որ նկատի կ'առնուի ներկայիս իբր միջազգային արդիւնք, որմէ շատ հեռու չենք. եթէ Համբարձումեանի առիթ տրուի չափուելու օտար մեծ մարդիկներու հետ, ես վստահ եմ որ ան պիտի շարժացնէ իր մեթոտը եւ պիտի հասնի մինչեւ 15 մէթրի:

Սկաւառակ! — Հայաստան՝ 40,38, Համբարձումեան. արտասահման՝ 35,99, Մ. Մկրեան. Սթոքհոլմի 1912ին Ողիմպիականին, որ շահած էր, յիշեալ արդիւնքով, հինգերորդ տեղը: Այդ շրջանին լաւ արդիւնք էր. այսօր ոչինչ կը ներկայացնէ միջազգային չափանիշներու մօտ. միջազգային՝ 53,10, Շրէօտէր (Գերմանիա), 50,48 Գարբանթըր (Մ. Ն.), 50,71 Վինթըր (Ճըր.): Հոս ալ Համբարձումեանին կը պակսի մեթոտ. եթէ ոչ, ունի հարկ եղած հասակը, ձեռքի մեծութիւն եւ հրաշալի մասնային կազմութիւն:

Մուրն. — Հայ.՝ 40,51, Համբարձումեան Ս. արտասահմանի մէջ նետողներ չենք ունեցած: Միջազգ.՝ 57,77, Ռէյան (Մ.Ն.). նմանապէս Շուէտացիները, Իրլանտացիները, Գերմանացիները շատ զօրաւոր են այս մասնազիտութեան մէջ 56,49, Հայն (Գերմ.), 55,04, Պլաք (Գերման), 54,83, Վարնկարտ (Շուէտ), 54,74, Մաք Կրաթհ (Մ. Ն.):

ԿԻՆԵՐՈՒ ԶՍՓԱՆԻՇՆԵՐ

60 մէթր վազք. — Հայաստան՝ Ռիմիզովա, 8,7/10. արտասահման՝ Մոմճեան 8,8/10. միջազգային՝ Սթէֆանս, 7,3/10 (Մ.Ն.): Արդիւնքները զէչ չեն: Կարելի է, յաճախակի փորձերով, թեքնիքը կատարելագործել եւ մեկնամիտփորձերուն աւելի ուշադրութիւն ընել. նմանապէս վաղքի ընթացքին ոտքերը զետեղել միեւնոյն գիծին վրայ եւ համաչափութիւն ստեղծել շարժումներուն մէջ:

100 մէթր վազք. — Հայ.՝ Աւետիսեան, 13,4/10. միջ.՝ Սթէֆանս, 11,5/10 (Մ.Ն.), Վալասիէվզ, 11,9/10 (Բոլ.), աշխարհի երկու լաւ վազողները:

200 մէթր վազք. — Հայ.՝ Աւետիսեան, 29,0 արտ.՝ Նուարդ Սարգիսեան, 29,1/10. միջազգ. մրցանիշ գոյութիւն չունի կիններու համար, որով կարելի չէ բաղդատութեան եզր մը գտնել: Բայց կը կարծեմ թէ

Աւետիսեան, որ Խ. Հայաստանի ախոյեան է զրեթէ բոլոր վաղքերուն, պէտք է որ 27.5/10ով կարողանայ կտրել այս հեռաւորութիւնը. նոյնպէս կը խորհիմ որ հասնելու ատեն կը դանդաղի իր վաղքը եւ թէ այդ է պատճառը որ չէ կարողացած աւելի կարճ ժամանակի մէջ վաղել 200 մէթրը:

300 մէթր վազք. — Հայ.՝ Աւետիսեան, 47.6/10:

400 մէթր վազք. — Հայ.՝ Աւետիսեան, 1.06.4/10:

500 մէթր վազք. — Հայ.՝ Աւետիսեան, 1.30.4/10:

800 մէթր վազք. — Հայ.՝ Աւետիսեան, 2.30.8/10. միջ.՝ 2.22.2/5, Հիթօմի (ձաւրոն), 2.26.4/5, Բատք (Գերմ.):

Աւետիսեան, կ'երեւայ արագութենէ աւելի միջին արագութեան վազող մըն է, որովհետեւ իր 2.30 2/5ով աշխարհի այս հեռաւորութեան վազողներու հինգերորդ տեղը կը զբաւէ՝ իրմէ առաջ կուզան Գանատացի Փանջէլ, եւ Հոլանտացի Մալլօն, 2.28 4/5. կը կարծեմ որ եթէ առիթը ներկայանայ մեր ախոյեանին վաղելու աշխարհի լաւագոյններուն հետ թէ պիտի կարողանայ նոր մրցանիչ մը տալ մեզի եւ թէ արձանագրել իր անունը միջազգային չափանիչներու ցանկին վրայ:

80 մէթր արգելարչաւ կամ արգելավազք. — Հայ.՝ Աւետիսեան, 14.2/10. միջազգ.՝ Վալլա (Իտալիա)՝ 11.7/10 եւ Տիբիբիբսօն (Մ. Նահնգ.)՝ 11.7/10: Այստեղ ալ կը տեսնուի որ ուրիշ մրցորդներ չունի իրեն համահաւասար որ իր կարողութիւնը ցոյց տայ իր ճիղերը չէ ամփոփած վստահ ըլլալով որ պիտի շահի. մեր հայրենակիցը իսկական լման Աթլէթ մըն է:

4×100 դրօշարչաւ. — (Ճեպասուրհանդավազք) Հայ.՝ 56.8/10, Սարգսեան, Ս. Միքայէլեան, Կ. Բելիցկայա, Բալխանեան, միջազգ.՝ 46.9/10 (Գերմանիա), 46.9 (Մ. Նահանգներ):

Շատ հեռու ենք միջազգային չափանիչ-

ներէն. կը տեսնուի որ մեր կիները արագութիւն վաղելու յարմարութիւն չունին:

4×500 դրօշարչաւ. — Հայ.՝ Միքայէլեան Կ., Թեմիզովա Պ., Ալեքսանեան, Սոսթրիկեան:

400+300+200+100 վազք. — Հայ.՝ 2.39.5/10, Աւետիսեան, Պողոսեանայա, Սելբիւկովա. այս երկու մրցումները նրմանապէս 150 մ. արդելարչաւը 1930էն ի վեր կիներու խաղացանկէն դուրս հանուած են, նկատի ունենալով որ բնախօսական տեսակէտով վնասակար են:

ՅԱՏԿԵԼ. — Երկարութիւն տեղէն (կեցած). — Հայ.՝ 2.29, Միքայէլեան Կ. միջազգային չափանիչ գոյութիւն չունի 1920էն ի վեր:

Ուժով երկարութիւն ցատկի. — Հայ.՝ 5 մ. 10 սմ., Աւետիսեան. միջազգային՝ պաշտօնական մրցում գոյութիւն չունի ներկայիս. անցեալի մրցանիչն է 5 մ. 42, Օտան (Անգլիա), որով Աւետիսեան կըրնայ պատուոյ տեղ զբաւել իր արդիւնքովը: Եթէ արագութիւն վաղելը կատարելագործէ, երկարութիւն ցատկելու մէջ շատ աւելի արդիւնք ձեռք կընայ բերել:

Բարձրութիւն կեցած. — Հայ.՝ 0.98, Սարգսեան:

Ուժով բարձրութիւն ցատկի. — Հայ.՝ 1 մ. 40, Աւետիսեան. միջազգ.՝ 1 մ. 62, Քոպք (Հունգ.), Ողիմպիականի չափանիչ. Աշխ.՝ 1.66, Շէլլէյ (Մ. Ն.):

Իրրեւ արդիւնք, դէշ չէ. եթէ թեքները աւելի կատարելագործուի, ոտքերը փոխելու եւ մեկնման կէտը յարմարցուի, հաւանաբար պիտի կարողանայ 1.50ի հասնիլ, որ միջազգային արժէք կ'ունենայ, երբ նկատի առնենք երկու ախոյեաններէն վերջը Էկոզ արդիւնքները. Քօն (Գերմ.), 1.58, Նիքօլա (Ֆրանս.), 1.52, եւ այլն:

ՆԵՏԵԼ-ԱՐՁԱԿԵԼ (Նետումներ). — Նրոնակ. — Հայ.՝ 42 մ. 98 ս., Ճերմակեան:

Նիզակ. — Հայ.՝ 34 մ. 56, Ճերմակեան:

միջազգ.՝ 45մ. 18, Թիլիի Ֆլէխէր (Գերման.), Տիարբրոն, 43 մ. 71:

Նիդալի արդիւնքը զէշ չէ, որովհետեւ միջազգային դասաւորումի տեսակէտով 9րդ տեղը կը զբաւէ աշխարհի մէջ Ֆրանսայէն վերջ (35 մ. 78):

Սկաւառակ.— Հայ.՝ 38 մ. 43, Սելբրիկովա. միջազգ.՝ 48 մ. 31, Մօէմէյէր (Գերմ.) . իրրեւ արդիւնք զոհացուցիչ է, երբ նկատի առնենք առաջին հինգերը. 1936ի Ողիմպիականին մեր հայրենակիցը կը զբաւէ 6րդ տեղը:

Գունդ հրիլ.— Հայ.՝ 14 մ. 07, Սելբրիկովա. միջազգային արդիւնք է. աշխարհի չափանիշը (14 մ. 56) Գերմանացի Մօէմէյէրին կը պատկանի, որով երկրորդ կամ երրորդ տեղը կը զբաւէ վերոյիշեալ արդիւնքովը:

Եռամրցում (Թռիւթլոն).—Գնդի հրումն 14 մ. 07, ուժով բարձրութիւն 1 մ. 38, վազք 100 մէթր 14 ե.վ., համամիութենական ռեքորտներ են 1945 տարւոյ համար (ախոյեան):

Կիներու բաժինը շատ աւելի լաւ արդիւնք ունի քան այրերունը միջազգային տեսակէտով. բայց նկատի առնենք որ 1933էն 1938ի շրջանին, է որ ձեռք ձգած են այս արդիւնքները: Չորս տարուան պատերազմը արգելք եղած է մեր մարդիկիններուն կատարելագործելու իրենց սիրած ճիւղերը. հիմա որ պատերազմը վերջ գրտած է, անոնք քանի մը տարուան մէջ պիտի կարողանան նոր նուաճումներ ձեռք ձգել, հաւասարելով աշխարհի չափանիշներուն:

Լ Ո Ղ Ա Լ

Ազատ ոճով 100 մէթր.— Հայ.՝ Լադովսկի Գ. 1.07.0 միջազգ.՝ 56.6/10, Բէթր Յրիք (Մ.Ն.), Ողիմպիականի ախոյեան, Քդիք (Հունդ.), Արէյ (Ճարոն). բազմատեղով միջազգային մրցանիշներու հետ, կը տեսնենք թէ Լադովսկիի արդիւնքը լաւ

է. 14րդ տեղը կը զբաւէ աշխարհի մրցանիշներուն վրայ:

200 մէթր.— Հայ.՝ Լադովսկի Գ., 2.38.1/10, 1944ին Երեւանի միջազգ. Համերա (Ճարոն), 2.34.3/10. հոս ալ կը տեսնուի որ արդիւնքը շատ լաւ է միջազգային տեսակէտով. ութերորդ տեղը կը զբաւէ միջազգային տեսակէտով. ութերորդ տեղը կը զբաւէ միջազգային ցանկին վրայ:

400 մէթր.— Հայ.՝ Լադովսկի Գ. 5.47.4. միջազգ.՝ Մէտիզա (Մ.Ն.), 4.38.7/10. այստեղ տարբերութիւնը բաւական հեռու է միջազգային մրցանիշէն:

1500 մէթր.— Հայ.՝ Օրէթով, 30.45.0. միջազգ.՝ 19.7.2/10, Արնպորկ (Շուէտ), Թարատա (Ճարոն), 19.33.7/10. միջազգային մրցանիշներէն շատ հեռու ենք, երբ նկատի առնենք որ Հայաստանի մէջ հազար մէթրը կը լողան 19.34.5/10ով:

Թեւ լող (պաւս), 100 մէթր.— Հայ.՝ Զարեղինով, մէկ վ. 19.3/10. միջազգային տեսակէտով արդիւնքը զոհացուցիչ է, բայց Ողիմպիականի մաս չի կազմեր 100 մէթր լողալը:

200 մէթր.— Հայ.՝ Զարեղինով, 2.59.1/10, Համիւրօ (Ճարոն), 2.42.9/10, Ողիմպիականի ախոյեան, իսկ միջազգ. մրցանիշը 2.37.2/10, Քասլէյ (Մ.Ն.). բաւական հեռու ենք միջազգ. արժէք ունենալէ:

4×100 դրօշաբշաւ լողալով.— Միջազգային մրցանիշներուն հետ կարելի չէ բաղդատութեան դնել, որովհետեւ այս մրցումը տեղի չունենար Ողիմպիական խաղերուն. Հայ.՝ 4.47.0, բայց Ամերիկացիները կըրցած են հաստատել 4.11.7/10ով մրցանիշ մը, իսկ Հոլանտայի կիները կըրցան 1936ին հաստատել կիներու մրցանիշ մը 4.33.3/10ով:

Կ Ի Ն Ե ր

Ազատ ոճով, 100 մ.— Հայ.՝ Միրզոյեան Կ. մէկ վ. 14.9/10. միջազգ.՝ Տէն Ուտըն (Հոլ.), մէկ վ. 4.8/10 Եթէ բաղդատութեան առնենք այրերու եւ կանանց

արդիւնքները, կանայք աւելի արագ կը լողան Հայաստանի մէջ:

100 մ. մէքբի վրայ. — Հայ.՝ Միրզոյեան Կ., մէկ զ. 31.8/10. միջազգ.՝ Ժարէթ Հորմ (Մ.Ն.), մէկ զ. 15.3.10. հասալ, միջազգային տեսակէտով, բաւական հեռու ենք, բայց մեր հայրենակիցը կը դրաւ 14րդ տեղը, որ ցոյց կուտայ թէ եթէ ունենայ իրեն հաւասարող հակառակորդներ, աւելի լաւ արդիւնք կրնայ ձեռք բերել:

Թեւ լող (պոսս), 100 մ. — Հայ.՝ Միրզոյեան Կ., 1.37.5/10. միջազգային մըրցումներուն մաս չի կազմեր, բայց, իրրեւ արդիւնք, զոհացուցիչ է:

200 մէքբ. — Հայ.՝ Միրզոյեան, 3.32.0. միջազգ.՝ Մաշաթա (Ճարոն), 3.3.4/10. 19րդ տեղը կը դրաւ (որ զոհացուցիչ է) Ֆրանսայէն վերջ:

400 մ. ազատ լող. — Հայ.՝ Միրզոյեան Կ., 6.15.4/10. միջազգ.՝ Մանթէնպրօք (Հոլանտ.), 5.26.4/10. բաւական հեռու ենք այս թիւերէն, բայց մեր հայրենակիցը 12րդ տեղը կը դրաւ:

Ամէն պարագայի մէջ, Միրզոյեան արժէքաւոր լողացող մըն է. կ'արժէ մօտէն հսկել իրեն եւ կանոնաւոր կերպով կատարել տալ իր փորձերը:

Բազդատենք այրերու արդիւնքը եւ կիներունը և պիտի տեսնենք որ կիները շատ աւելի արագ կը լողան. 1000 մ. այրերը՝ 19.34.6/10. հալար մէթր կիները՝ 16.47.6/10. միջազգային տեսակէտով շատ լաւ արդիւնք մըն է:

ՀԵԾԵԼԱՆԻԻ

Ա յ ր Ե ր

Հայաստանի մէջ մենք ունինք լաւ վազողներ, որոնք նոյն իսկ Նորհրդ. Միութեան միւս Հանրապետութիւններուն մէջ շահած են շատ մը մրցումներ եւ որոնք կրնան մրցիլ միջազգային հանրաձանօթ վազողներու հետ: Ես առիթը ունեցայ մեր մարզիկներուն փորձերուն ներկայ գըտնուելու Երեւանի մէջ. թիւերով խօսինք:

200 մէքբ. — 13.8/10, Յովհաննէսեան Ն. Տինամօ:

500 մէքբ. — 38.6/10, Սմբատեան Վ.:

1000 մէքբ. — 1 զ. 20.0, Սմբատեան. տեղէն 1 զ. 25.0, Մանուկեան:

Միջազգային՝ 200 մ. 16.4/10, 500 մ. 35.4/10:

1000 մէքբ. — մէկ զ. 13.8/10 (բոսֆօլիսիտի արդիւնքը):

5000 մէքբ. — 6.05 զ., Սահակեան:

10.000 մ. — 11.21.6/10, Գարաղեան:

15.000 մ. — 17 զ. 16.0, Քոչարեան:

50 ֆլմ. — մէկ ժամ 43.14.2/10, Ղալապարիշեան:

100 ֆլմ. — 4 ժ. 06.05 զ., Գարրիշեան: Իսկ ճամբու հեծելանիւով, 25 քմ. 59.17 վայրկեան, Եղիկեան:

30 ֆլմ. — մէկ ժամ 11.30 զ., Ազիզեան: Արդիւնքները, միջազգային տեսակէտով, զոհացուցիչ են. մաղթենք որ 1948ի Ողիմպիականին մեր մարզիկներն ալ մաս առնեն եւ հայ անունը արձանադրել տան միջազգ. մրցանիշներու ոսկետառերով:

Կ Ի Ն Ե ր

200 մ. — 15.5 զ., Ակունովա:

500 մ. — 39.9 զ., Կեկլեկեան:

1000 մ. — 1.36.0, Կեկլեկեան:

Կանանց մասին ուեէ կարծիք չեմ կրնար յայտնել, որովհետեւ միջազգային մըրցումներ գոյութիւն չունին. բայց գնահատելի է Հայաստանի Ֆիզկուլտուրայի նախաձեռնութիւնը պատրաստելու համար կին մրցորդներ, չարքաշ եւ սովուն:

ԾԱՆՐ ԱԹԼԵԹԻԿ

Մարմնակրթանքի այս բաժինը Ն. Հայաստանի մէջ շատ զարգացած է եւ մեր մարզիկները կրնան մրցիլ ուեէ ազգի հետ. միջազգային տեսակէտով անոնք կը դրաւն առաջին, երկրորդ եւ երրորդ տե-

ղերը. մանուկանց Մանուկեան եւ Համբարձումեան, որոնք արդէն համաշխարհային մրցանիշներ ունին: Պէտք է դիտել թէ՛ այս ճիւղին մէջ գոյութիւն ունին վեց ծանրութիւններ. փետուր, կիսաթեթեւ, թեթեւ, միջին, կիսածանր եւ ծանր. եւ երեք շարժում՝ սեղմում երկու ձեռքով, սրկում երկու ձեռքով, հրում երկու ձեռքով. ամէն մէկ շարժումը ունի իր մրցանիշը, ապա երեք շարժումներու ընդհանուր գումարը ունի իր առանձին մրցանիշը:

Կայ նաեւ աջ ձեռքով սրկում եւ ձախ ձեռքով սրկում. բայց միջազգ. ողիմպիականներուն մէջ երկու ձեռքով միաժամանակ կատարուած մրցումներն են միայն որ ընդունուած են: Երկու ձեռքերու առանձին սրկումներու համաշխարհային մրցանիշները գոյութիւն ունին, բայց ներկայիս այդ մրցումները տեղի չեն ունենար:

Մեր մարզիկներուն արդիւնքները նշանակելի են ամէն ճիւղի մէջ:

Գաղափար մը տալու համար, ճշգեղ ծանրութիւններու քանակը՝ աւելի լաւբրունելու համար: Փետուր ծանրութիւն՝ մինչեւ 60 քիլո սէտք է կռէ մարզիկը. թեթեւ՝ 60 քիլոյէն մինչեւ 67 ք. 500, միջին՝ 67 ք. 500էն մինչեւ 75 քիլո. կիսածանր՝ 75էն 82.500, իսկ ծանր՝ 82.500էն սկսեալ:

Սեղմում երկու ձեռքով

- Փետուր.— Վարդանեան Ս., 81 ք. 800:
- Կիսաթեթեւ.— Ազգարով Հ., 95 ք.:
- Թեթեւ.— Բարունակեան Գ., 100 ք.:
- Միջին.— Ֆեսֆանով Վ., 107 ք. 500:
- Կիսածանր.— Ֆեսֆանով Վ., 116 ք.:
- Ծանր.— Համբարձումեան Ս., 136 ք. 50 կրամ:

Պոկում երկու ձեռքով

- Փետուր ծանր.— Ազգարով, 85 ք.:
- Կիսաթեթեւ.— Ազգարով, 95 ք.:
- Թեթեւ.— Պարնակեան, 97 ք. 65:
- Միջին ծանր.— Ֆեսֆանով, 107 ք. 600:

Կիսածանր.— Մանուկեան, 112 ք. 700:

Ծանր.— Համբարձումեան, 132 ք. 450

Հրում երկու ձեռքով

- Փետուր ծանր.— Օղանեան Պ., 105 ք.:
- Կիսաթեթեւ.— Ազգարով, 125 ք.:
- Թեթեւ.— Բարունակեան, 126 ք.:
- Միջին.— Ֆեսֆանով, 135 ք.:
- Կիսածանր.— Մանուկեան Ռ., 145 ք.:
- Ծանր.— Համբարձումեան, 168 ք. 200:

Պոկում միս ձեռքով

- Փետուր ծանր.— Գուրով, 60 ք.:
- Կիսաթեթեւ.— Ալալերդեան, 68 ք. 400:
- Թեթեւ.— Յակոբեան, 70 ք.:
- Միջին.— Սանդալեան, 78 ք. 400:
- Կիսածանր.— Մանուկեան, 98 ք. 85:
- Ծանր.— Համբարձումեան, 100 ք.:

Պոկում աջ ձեռքով

- Փետուր.— Օղանեան, 68.8:
- Կիսաթեթեւ.— Ազգարով, 72.0:
- Թեթեւ.— Բարունակեան, 80.7:
- Միջին.— Ֆեսֆանով, 82.5:
- Կիսածանր.— Մանուկեան, 87.6:
- Ծանր.— Համբարձումեան, 90.2:

Կայ նաեւ հրում աջ ձեռքով եւ հրում ձախ ձեռքով, որ կը հանդիպինք նոր անուններու. Յովհաննէսեան, թեթեւ՝ 69.500ով. հրում ձախ ձեռքով՝ Յակոբեան, միջին ծանրութիւն՝ 86 քիլո, եւ Համբարձումեան, 99 ք. 400, իբր լաւագոյն արդիւնքներ:

Երեք փորձերու միացեալ արդիւնքը

Փետուր.— 305 ք., Օղանեան, կառուցող, 1941ին միջազգ.՝ Թէրլազա (Մ.Ն.), 312 ք. 500. Սալէհ (Եգիպտ.), 305 ք., Իպրահիմ (Եգիպտ.), 300 ք., որով մեր հայրենակից Օղանեան կը զբաւէ աշխարհի երկրորդ տեղը:

Կիսաթեթեւ.— Ազգարով, 315 ք., միջազգային մրցանիշ գոյութիւն չունի ներկայիս:





Թեքեւ. — 317 քիւօ, Բարունակեան, (Գինամօ), 1941: Միջազգային՝ Մէսպաս (Եզիպոսս), Ֆէին (Աւստրիա), 316 ք. 800 կր., որով մեր հայրենակից Բարունակեան կը կոտորէ աշխարհի մրցանիշը և կը բռնէ առաջին տեղը:

Միջին ծանրութիւն. — Հայ.՝ Ֆեսֆա - նով Գ., 350ք. Թունի (Եզիպոս.), 367.500, Իսմայէր (Գերմ.), 352.500. մեր հայրենակիցը կը գրաւէ չորրորդ տեղը միջազգային ցանկին վրայ:

Կիսածանր. — Հայ.՝ Մանուկեան Ռ., Տինամօ (1941), 357 ք. 500: Միջազգ.՝ Հօսթէն (Ֆրանսա), 372 ք. 500. Տէօթէզ (Գերմ.), 365 ք. Իպրահիմ (Եզ.), 360 ք. Մանուկեան կը գրաւէ չորրորդ և հինգերորդ տեղերը, ինչ որ շատ պատուաւոր արդիւնք մըն է:

Դանր. — Հայ.՝ Համբարձումեան, 433ք. 550: Միջազգ.՝ 410 ք. Մայէր (Գերմ.) Բէսնիքա (Չեխ), 402 ք. 500, Իշթաքար (Էսթօնի), 400 ք.: Համբարձումեան կը

կոտորէ աշխարհի չափանիշը և կը հաստատէ 23 քիւօ տարբերութեամբ սրբօր մը: Երեւան եղած շրջանիս ներկայ եղայ Սաքոյին փորձերուն, նմանազէս ի պատիւ պատգամաւորներու կարճակերպուած մարզական հանդէսին, ուրտեղ Համբարձումեան մասնակցեցաւ իր երեք փորձերով և նոյն օրը ինձ հաւատք ներշնչեց որ պիտի կարողանայ նոր մրցանիշ մը հաստատել:

Կը յուսամ թէ մօտ ատենէն մենք պիտի տեսնենք Համբարձումեան մեր մէջ: Ան պիտի մրցի Ֆրանսացի լաւազոյն մարզիկին Ֆէրրարի հետ, որը արդէն ունի քանի մը համաշխարհային մրցանիշներ: Եթէ Համբարձումեան այդ օրը կարենայ իր միջոցները մէջտեղ բերել, առաջին անգամ ըլլալով հայ մարզիկ մը իր անունը պիտի արձանագրէ միջազգային մրցանիշներու ցանկին վրայ:

Մարմնակրթ. մասնագէտ ուսուցիչ  
Մ. ՄԱԼՈՒՄԵԱՆ



Le Gérant : K. GIBDOUNY

Imp. A. Der Agopian, 17, rue Damesme

## Հ. Մ. Ղ. Մ.

Տարեկան բաժնեդին 600 Փր.

Ձեռքի հատը 50 Փր.

---

Գրամական առաքման համար.

U. G. ARMENIENNE

**Mr. J. Artinian**

Թղթակցութեան հասցէ

U. G. ARMENIENNE

« **Homenetmen** »

32 - 34 Rue St. Lazare - Paris (9<sup>e</sup>)

---

Փրկեցէ՛ք մեր եւ մեր տղոց ախոսները  
գործածելով

**DOLINE ALCALINE**

աղուայ մաքրող հանրածանօթ փոշին :

Կեղրոնասեղի, 47, Rue Lafayette, Paris (9<sup>e</sup>)

---

Le Gérant : **K. GIBDOUNY**

Imp. A. Der Agopian, 17, rue Damesme